ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ
ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Բացահայտելով հոգևոր պարգևների խորհուրդը

Անհատական կամ խմբային ուսումնասիրության համար

ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

Բացահայտելով հոգևոր պարգևների խորհուրդը

Անհատական կամ խմբային ուսումնասիրության համար

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

Սուրբ Հոգու պարգևները, Քենեթ Է. Հեգին, հայերեն

Հեղինակային իրավունքները պատկանում են «1986 Rhema Bible Church»-ին, նաև հայտնի որպես «Kenneth Hagin Ministries, Inc.»
Բոլոր իրավունքները պաշտպանված են. առաջին հրատարակություն՝ 1998 թ.
ISBN 0-89276-064-8
Տպագրված է ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում՝
«Kenneth Hagin Ministries»
Փ/Ա 50126, Թալսա, Օկլահոմա, 74150-0126

Կանադայում՝
«Kenneth Hagin Ministries of Canada»
Փ/Ա 335, բաժանմունք D
Էթոբիկո (Տորոնտո), Օնտարիո, Կանադա M9A 4X3

Աստվածաշնչյան մեջբերումները «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

Բովանդակություն

Սուրբ Հոգու պարգևները 5
Գիտության խոսքի պարգևը 13
Գիտության խոսքի պարգևը Հին Կտակարանում 25
Իմաստության խոսքի պարգևը (մաս 1) 33
Իմաստության խոսքի պարգևը (մաս 2) 41
Հոգիների զանազանության պարգևը 49
Հավատքի պարգևը (մաս 1) 59
Հավատքի պարգևը (մաս 2) 67
Հրաշագործությունների պարգևը 77
Բժշկությունների պարգևները 85
Մարգարեության պարգևը 95
Լեզուների պարգևը 103
Լեզուների մեկնություն 111
Հեղինակի մասին 120

Սուրբ Հոգու պարգևները

Հատված Սուրբ գրքից՝ Ա Կորնթացիս 12.1-14

Առանցքային ճշմարտություն. Սուրբ Հոգու պարգևները տրված են եկեղեցու շինության համար:

Պողոսը՝ Հոգուց ներշնչված, Կորնթոսի եկեղեցուն գրել է. «*Բայց հոգևոր պարգևների համար, եղբայրնե՛ր, չեմ կամենում, որ չգիտենաք*» (Ա Կորնթ. 12.1):

Եթե Աստծո Հոգին Պողոսի միջոցով հայտնում էր, որ չէր ցանկանում՝ Կորնթոսի եկեղեցին չգիտենար հոգևոր պարգևների մասին, ապա, վստահ եմ, որ Նա չի ցանկանում դա նաև այսօրվա եկեղեցու համար: Եվ սակայն այս բաների վերաբերյալ կա ակնհայտ անտեղյակություն:

Որոշ վայրերում մարդիկ առհասարակ ոչինչ չգիտեն դրանց մասին, անգամ այն, որ նման պարգևներ գոյություն ունեն: Նրանք կարծում են, թե պարգևները վերացել են: Այլ վայրերում որոշ բաներ գիտեն դրանց մասին, բայց նրանց այդ գիտելիքը խիստ սահմանափակ է:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 12.1-14

1 Բայց հոգևոր պարգևների համար, եղբայրնե՛ր, չեմ կամենում, որ չգիտենաք:

2 Դուք գիտեք, թե երբ որ հեթանոս էիք, անձայն
կուռքերի մոտ էիք տարվում, ինչպես որ առաջ-
նորդվում էիք:
3 Նրա համար հայտնում եմ ձեզ, որ ոչ ոք չկա Աստ-
ծո Հոգով խոսող, որ Հիսուսին նզովյալ ասի, և ոչ
ոք չի կարող Հիսուսին Տեր ասել, եթե ոչ Հոգով
Սրբով:
4 Պարգևները զանազան են, բայց Հոգին նույնն է:
5 Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն
է:
6 Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստ-
ված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում
է:
7 Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը
օգտի համար:
8 Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության
խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու
չափով:
9 Մյուսին՝ հավատք՝ նույն Հոգով, ուրիշին՝ բժշկութ-
յան պարգևներ՝ նույն Հոգով:
10 Ուրիշին՝ զորությունների ներգործություններ,
և ուրիշին՝ մարգարեություն, ուրիշին՝ հոգիների
ընտրություն, ուրիշին՝ այլևայլ լեզուներ, ուրիշին՝
լեզուների թարգմանություններ:
11 Բայց այս ամենը հենց միևնույն Հոգին է ներգոր-
ծում՝ ամեն մեկին բաժանելով ինչպես կամենում է:
12 Ինչպես էլ մարմինը մեկ է և անդամներ շատ ունի,
և մեկ մարմնի բոլոր անդամների շատ լինելով՝
մարմինը մեկ է, այսպես էլ Քրիստոսը:

13 Որովհետև մենք էլ ամենքս մեկ Հոգով մկրտվեցինք մեկ մարմին լինելու. թե՛ հրեաներ, թե՛ հույներ, թե՛ ծառաներ, թե՛ ազատներ, և ամենքս մեկ Հոգուց խմեցինք:

14 Որովհետև մարմինն էլ մեկ անդամ չէ, այլ շատ:

Ա Կորնթացիս թուղթը մեկ անձի ուղղված նամակ չէ. այն ուղղված է ամբողջ եկեղեցուն: Ոմանք կարծել են, թե այս խոսքերն ուղղված են ինչ-որ անձի, սակայն Պողոսն ամբողջ եկեղեցուն է ասում, որ նախանձավոր լինեն պարգևների նկատմամբ: Եվ երբ ամբողջ Մարմինը նախանձավոր լինի դրանց նկատմամբ, Հոգին ամեն մեկին կբաժանի այդ պարգևները, ինչպես Ինքն է կամենում:

Այստեղ Պողոսը նկատի ունի՝ բոլորը չէ, որ ունենալու են բոլոր պարգևները. նա ասում է. *«Որովհետեւ մեկին* [ոչ բոլորին] *Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք...»:*

Ոմանք կտրել են այս խոսքերը համատեքստից և կարծել, թե Աստվածաշունչը անհատին է ասում, որ ցանկանա ունենալ բոլոր այս պարգևները: Իրականում Պողոսը եկեղեցուն է դիմում՝ որպես խմբի, որ նախանձավոր լինեն պարգևների նկատմամբ: Երբ եկեղեցին այդպես վարվի, Հոգին ամեն մարդու կբաժանի, ինչպես Ինքն է կամենում. ոչ թե ինչպես ես եմ կամենում կամ ինչպես դուք եք կամենում, այլ ինչպես Հոգին է կամենում:

Հոգու պարգևները Հիսուսին Տեր են դավանում

Կորնթոսի եկեղեցին ուներ որոշ առանձնահատկություններ, որոնք այսօր չկան մեր մեջ:

Պողոսն ասում է. *«Դուք գիտեք, թե երբ որ հեթանոս էիք, անձայն կուռքերի մոտ էիք տարվում, ինչպես որ առաջնորդվում էիք»:* Այս մարդիկ նախկինում երկրպագում էին կուռքերի: Կուռքերին այդ երկրպագության ժամանակ նրանք, սխալ հոգուց դրդված, սխալ բաներ էին ասում:

Եկեղեցու պատմությունից տեղեկանում ենք, որ նրանցից ոմանք, ովքեր մասնակցում էին քրիստոնեական հավաքներին, երբ Հոգին դրսևորում էր Իրեն, ինչ-որ բաներ էին ասում սխալ հոգու ազդեցությամբ: Ոմանք նույնիսկ ոտքի էին կանգնում ծառայության ժամանակ և ասում, որ Հիսուսը նզովված է:

Պողոսն ասում է, որ երբ Սուրբ Հոգին է գործում, Նա Հիսուսին Տեր է դավանում (խ. 3): Եթե խոսքի պարգևներից որևէ մեկն է գործում, ապա, իհարկե, Սուրբ Հոգին կասի, որ Հիսուսն է Տերը: Պարգևներից որն էլ գործի, այն միշտ Հիսուսին է բարձրացնելու որպես Տեր, ոչ թե մարդկանց: *Պարգևները ուշադրությունը կենտրոնացնում են ոչ թե մարդու, այլ Քրիստոսի վրա:*

«Նրա համար հայտնում եմ ձեզ, որ չկա *Աստծո Հոգով խոսող, որ Հիսուսին նզովյալ ասի»:* Կարող եք վստահ լինել, որ երբ ինչ-որ մեկը խոսքի պարգև է գործածում և Հիսուսին նզովյալ է ասում կամ որևէ կերպ Նրա դեմ խոսում, ապա այդ խոսքերի հեղինակը Սուրբ Հոգին չէ:

Հետո Պողոսն ասում է, որ ոչ ոք չի կարող Հիսուսին Տեր կոչել առանց Սուրբ Հոգու: Նա նկատի ունի, որ եթե մարդը ճիշտ հոգուց դրդված է խոսում, ապա Հիսուսին Տեր կդավանի:

Բավականաչափ հասկացողություն չունենալու պատճառով շատերը փորձում են պարգևը գործածել առանց Հոգու: Գուցե այդ պարգևը ժամանակ առ ժամանակ

դրսևորվել է նրանց կյանքերում, և նրանք կարծում են, թե *արդեն ունեն դա և կարող են գործածել, երբ կամենան*: Սակայն երբ այդպես են վարվում, վստահաբար խնդրի մեջ են հայտնվում՝ լայն բացելով իրենց սատանայական մոլորության համար: Երբ հեռանում ենք Խոսքից, սատանան է զբաղեցնում մեզ:

Պարգևների զանազանությունը

Պողոսը շարունակում է՝ ասելով. *«Պարգևները զանազան են...»:* «Զանազան» բառը նշանակում է «տարբեր»: Այլ խոսքերով՝ Պողոսն ասում էր. «Կան տարբեր պարգևներ, սակայն Հոգին նույնն է: Կան տարբեր պաշտոններ, սակայն Տերը նույնն է: Եվ կան տարբեր ներգործություններ, սակայն նույն Աստված է ամենը ամենքի մեջ ներգործում»:

Մասնավորապես այս խոսքի վերաբերյալ կան երկու տարբեր տեսություններ, և ես կարևորություն եմ տեսնում այդ երկու տեսություններում էլ:

Տեսություններից մեկն այն է, որ տարբեր մարդկանց մեջ այդ պարգևները տարբեր կերպ են գործում: Ասում են, որ ներգործությունների տարբերությունը խոսում է այն մասին, որ տարբեր անհատների մեջ պարգևները *ներգործում են* տարբեր կերպ և ոչ միշտ նույն կերպ:

Մյուս կողմից՝ կան մարդիկ, որոնք կարծում են, թե խոսքը պարգևների տարբերությունների մասին է, այսինքն՝ կան տարբեր պարգևներ, տարբեր պաշտոններ և տարբեր ներգործություններ: Նրանք ասում են, որ այստեղ Պողոսը երեք տարբեր բաների մասին է խոսում՝ ոչ միայն պարգևների: Նա խոսում է պարգևների, պաշտոնների և ներգործությունների մասին:

«Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգ-

տի համար»: Ուշադրություն դարձրեք, որ նա պարգևները կոչում է «հայտնություն» (անգլերենից բառացի թարգմանված՝ «դրսևորում»). Հոգու հայտնությունը *(դրսևորումը)* օգտի համար է: Դրանք տրված են ամբողջ եկեղեցու օգտի համար, ոչ թե անհատի:

Պողոսը շարունակում է՝ *«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք...»,* և թվարկում է ինը պարգևները:

Պարգևների երեք տեսակները

Ինը պարգևները նկարագրելու ամենահեշտ եղանակը հետևյալն է՝ դրանցից երեքը *խոսքով* են արտահայտվում, երեքը՝ *գործով,* իսկ մյուս երեքը *բացահայտում են* ինչ-որ բան:

Խոսքով արտահայտվող երեք պարգևները կոչվում են *խոսքի պարգևներ*: Դրանք են մարգարեությունը, այլևայլ լեզուները և լեզուների մեկնությունը:

Գործով արտահայտվող երեք պարգևները կոչվում են *զորության պարգևներ*: Դրանք են հավատքի պարգևը, հրաշագործությունները և բժշկությունների պարգևները: Նշված երրորդ պարգևի մասին խոսելիս հունարեն բնագրում միշտ գործածվում է հոգնակի թիվը. թե՛ «բժշկություն» և թե՛ «պարգև» բառերը հոգնակիով են նշվում՝ բժշկությունների պարգևներ (սա միշտ չէ, որ ճիշտ է թարգմանված Աստվածաշնչի «The King James» թարգմանությունում): «Բժշկության պարգև» ասվածը գոյություն չունի:

Ինչ-որ բան *բացահայտող* պարգևները կոչվում են *հայտնության պարգևներ*: Դրանք են իմաստության խոսքը, գիտության խոսքը և հոգիների զանազանությունը:

Այս պարգևները թվարկված են ըստ իրենց կարևորության: Հայտնության երեք պարգևներից լավագույնը իմաստության խոսքի պարգևն է:

Զորության պարգևներից լավագույնը հավատքի պարգևն է:

Խոսքի պարգևներից լավագույնը մարգարեության պարգևն է:

Իհարկե, ցանկացած իրավիճակում լավագույնն այն պարգևն է, որն ամենաանհրաժեշտն է այդ պահին:

Անգիր.

«Բայց հոգևոր պարգևների համար, եղբայրնե՛ր, չեմ կամենում, որ չգիտենաք»:

– Ա Կորնթ. 12.1

Գիտության խոսքի պարգևը

Հատվածներ Աստվածաշնչից՝
Գործք 9.10-12, 10.9-20

Առանցքային ճշմարտություն. Գիտության խոսքը գերբնական հայտնություն է Սուրբ Հոգուց Աստծո մտքում եղած որոշ փաստերի վերաբերյալ:

Նախ և առաջ եկե՛ք ուշադրություն դարձնենք, որ այս պարգևը կոչվում է «գիտության խոսք» և ոչ թե «գիտության պարգև»: *«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով»* (Ա Կորնթ. 12.8): Գոյություն չունի հոգևոր «գիտության պարգև»: Գիտության խոսքը գերբնական հայտնություն է Սուրբ Հոգուց Աստծո մտքում եղած որոշ փաստերի վերաբերյալ:

Աստված ամբողջապես գիտություն է, Նա գիտի ամեն բան, բայց ամեն բան չէ, որ հայտնում է մարդուն, այլ պարզապես տալիս է մեկ խոսք կամ Իր իմացածի մի մասը: Խոսքը նախադասության մաս է, իսկ գիտության խոսքը՝ ոչ այլ ինչ, քան գիտության մի մասը: Նա գիտի ամեն բան: Նա ունի ամբողջ գիտությունը: Սակայն *ամեն բան* չի հաղորդում մեզ և ոչ էլ *գիտություն* է հաղորդում,

այլ գիտության *խոսք*՝ միայն այն մասը, որը Նա ցանկանում է, որ իմանանք:

Պարգևը գերբնական է

Բացի այդ՝ գիտության խոսքը գերբնական դրսևորում է, ինչպես Հոգու մյուս բոլոր պարգևները: Դրանցից ոչ մեկը բնական պարգև չէ. եթե որևէ մեկը բնական լիներ, ապա մյուսները ևս բնական կլինեին: Եթե մեկը գերբնական է, ապա մյուս բոլորը ևս գերբնական են:

Ոմանք ասում են, թե Ա Կորնթացիս 12.8-ը վերաբերում է բնական գիտելիքին: Եթե դա այդպես լիներ, ապա բժշկությունների պարգևները կգործեին ոչ թե գերբնական բժշկության, այլ բժշկագիտության զարգացման շնորհիվ: Վստահաբար, մենք հավատում ենք բժշկագիտությանը և շնորհակալ ենք Աստծուց դրա ընձեռած հնարավորությունների համար, սակայն Սուրբ գրքում խոսվում է *գերբնական* բժշկության մասին:

Եթե Հոգու պարգևները պարզապես բնական պարգևներ լինեին, ապա այլևայլ լեզուների պարգևը կվերաբերեր այն լեզուներին, որոնք մարդիկ բնական կերպով սովորում են: Այդ դեպքում նունիսկ չփրկված մարդիկ կարող էին ունենալ այդ պարգևը: Սակայն մենք գիտենք, որ «այլևայլ լեզուները» գերբնական են, քանի որ այդ պարգևի միջոցով կարողանում ենք խոսել լեզուներով, որոնք երբևիցե չենք սովորել. դրանք Սուրբ Հոգուց են տրվում: Գիտենք նաև, որ բժշկության պարգևը բնական բժշկությունը չէ, այսինքն՝ բժշկագիտության օգնությամբ բնությանը օժանդակելու մարդու կարողություն *չէ*: Այն գերբնական բժշկություն է, որը տրվում է Սուրբ Հոգուց:

Ես հավատում եմ, որ եթե ինը պարգևներից երկուսը գերբնական են, ապա գերբնական են բոլոր ինը: Ուստի այստեղ խոսքը չի վերաբերում բնական գիտելիքին, այլ գերբնականին՝ Աստծո Հոգուց տրված գերբնական հայտնությանը:

Շփոթելով գիտության խոսքի պարգևը բնական գիտելիքի հետ՝ մի մարդ ասել է. «Մենք մյուս՝ պակաս կարևոր պարգևների կարիքը չունենք, քանի որ ունենք գիտելիքի պարգևը»: Այն գիտելիքը, որով հպարտանում են նրանք, ովքեր նման կերպ են մտածում, մտավոր գիտելիքն է, գիտելիք, որը ձեռք է բերվում Սուրբ Հոգուց և Աստծո Խոսքից զատ: Իսկ այն գիտությունը, որի մասին Պողոսը խոսում է Ա Կորնթացիս 12.8-ում, Սուրբ Հոգու գերբնական պարգև է:

Տեսիլքների միջոցով դրսևորվող պարգևը

Գիտության խոսքի՝ տեսիլքի միջոցով դրսևորման օրինակ ենք տեսնում Հովհաննեսի կյանքում, երբ նա Պատմոս կղզում էր: Հովհաննեսը գրում է, որ Տիրոջ Օրն ինքը Հոգու մեջ էր, և Հիսուսը տեսիլքով հայտնվեց իրեն: Այդ տեսիլքով Հիսուսը Հովհաննեսին հայտնեց Փոքր Ասիայի յոթ եկեղեցիների վիճակի մասին, ինչը գրված է Հայտնության գրքում: Չնայած որ այդ հայտնության մեջ մարգարեական ուղերձ կա այսօր մեզ համար, այն ժամանակ Փոքր Ասիայում իրականում գոյություն ունեին այդ յոթ եկեղեցիները: Հովհաննեսը, որն աքսորված էր Պատմոս կղզի, հավանաբար չէր կարող իմանալ, թե ինչ էր կատարվում այդ քաղաքներում կամ եկեղեցիներում, սակայն Հիսուսը հայտնեց նրան այդ եկեղեցիների հոգևոր վիճակը: Դա գիտության խոսք էր:

ԳՈՐԾՔ 9.10-12

10 Եվ Դամասկոսում մի աշակերտ կար՝ անունն
Անանիա, և Տերը տեսիլքի մեջ նրան ասաց.

11 «Անանիա»: Եվ նա ասաց. «Ահա ես, Տե՛ր»: Եվ
Տերը նրան ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ այն փողոցը,
որ կոչվում է Ուղիղ: Եվ Հուդայի տանը որոնի՛ր մի
Սողոս անունով տարսոնացի մարդու, որովհետև
ահա աղոթք է անում»:

12 Եվ նա տեսիլքի մեջ տեսավ մի Անանիա անունով
մարդու, որ մտավ և ձեռքը դրեց իր վրա, որ տեսնի:

Այստեղ ևս գիտության խոսքը դրսևորվեց տեսիլքի միջոցով, սակայն այս անգամ այն տրվեց հասարակ մի մարդու: Անանիան առաքյալ չէր, ինչպես Հովհաննեսը, ոչ էլ հովիվ էր կամ ավետարանիչ: Նա անգամ հիշատակված չէ որպես ուսուցիչ: Աստվածաշունչն Անանիային կոչում է աշակերտ: Նա պարզապես Դամասկոսի եկեղեցու անդամ էր: Երբ Տերն է կամենում, գիտության խոսք կարող են ստանալ թե՛ եկեղեցու անդամները և թե՛ ծառայողները:

Այդ տեսիլքի միջոցով Տերն Անանիային ասաց, որ գնա մի տուն և աղոթի Սողոսի համար: Միևնույն ժամանակ Նա տեսիլքով հայտնվեց Սողոսին՝ ցույց տալով նրան, որ Անանիան գալիս է իր համար աղոթելու, որ ինքը «տեսնի»:

Անանիան բնական կերպով չէր կարող իմանալ, որ այդինչ փողոցում գտնվող այդինչ տանը Սողոս անունով մի մարդ այդ պահին աղոթում էր: Բացի գերբնական հայտնություն, այն է՝ գիտության խոսք ստանալուց՝ որևէ այլ կերպ նա չէր կարող իմանալ դրա մասին:

ԳՈՐԾՔ 10.9-20

9 Եվ հետևյալ օրը, երբ նրանք ճանապարհ ընկան
և այն քաղաքին մոտեցան, Պետրոսը վեր ելավ
կտուրը վեց ժամի մոտերը աղոթք անելու:

10 Սովեց և կամենում էր ճաշել, և երբ նրանք կերա-
կուր էին պատրաստում, մտքի հափշտակություն
եղավ նրա վրա:

11 Եվ տեսավ երկինքը բացված, և մի մեծ կտավի պես
անոթ, չորս ծայրից կապած, իջավ երկրի վրա,

12 որի մեջ կային երկրի ամեն կերպ չորքոտանիները
և գազանները և սողունները և երկնքի թռչունները:

13 Եվ ձայն եղավ նրան. «Վե՛ր կաց, Պետրո՛ս, մորթի՛ր
և կե՛ր»:

14 Պետրոսն էլ ասաց. «Քա՛վ լիցի, Տե՛ր, որովհետև ես
երբեք պիղծ կամ անմաքուր բան չկերա»:

15 Եվ դարձյալ երկրորդ անգամ ձայն եղավ նրան.
«Այն, որ Աստված սրբեց, դու պիղծ մի՛ համարիր»:

16 Այս երեք անգամ եղավ, և այն անոթը վերացավ
երկինք:

17 Եվ երբ Պետրոսը զարմացած էր իր մտքում, թե
ինչ պիտի լինի այն տեսիլքը, որ տեսավ, ահա
Կոռնելիոսից ուղարկված մարդիկ, Սիմոնի տունը
որոնելով, դռան մոտ կանգնեցին

18 և կանչելով հարցնում էին, թե «Սիմոնը, որ Պետ-
րոս է կոչվում, այստեղ է հյուր»:

19 Եվ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար միտք էր
անում, Հոգին նրան ասաց. «Ահա երեք մարդիկ
քեզ որոնում են:

20 Բայց վե՛ր կաց, իջի՛ր և գնա՛ նրանց հետ առանց
խղճմտանք անելու, որովհետև Ես եմ ուղարկել
նրանց»:

Այստեղ ևս գիտության խոսքը դրսևորվեց տեսիլքի միջոցով: Պետրոսը հափշտակության մեջ ընկավ և տեսիլք տեսավ: Մինչ մտածում էր տեսիլքի նշանակության մասին, Սուրբ Հոգին ասաց նրան. «Երեք մարդիկ քեզ են որոնում»: Պողոսը չգիտեր, որ այդ մարդիկ այնտեղ էին: Նա չէր կարող իմանալ, եթե Սուրբ Հոգին չասեր նրան: Դա գիտության խոսք էր՝ գերբնական հայտնություն:

Ներքին հայտնության միջոցով դրսևորվող պարգևը

Երբեմն գիտության խոսքը տրվում է ներքին հայտնությամբ: Երբ Հիսուսը զրուցում էր Սամարիայում ջրհորի մոտ կանգնած կնոջ հետ, գիտության խոսքի միջոցով Նա հավաստիացրեց մեղավոր կնոջը, որ նա Փրկչի կարիք ունի (Հովհ. 4): Այդ կինը Հիսուսից հարցրեց, թե Նա ով էր, և Հիսուսը պատասխանեց՝ «Եթե իմանայիր, թե Ես ով եմ, ապա Ինձնից կխնդրեիր, և Ես քեզ ջուր կտայի, որից հետո այլևս չէիր ծարավի»:

«Տո՛ւր ինձ այդ ջրից, որպեսզի այլևս ստիպված չլինեմ գալ ու այստեղից ջուր հանել»,- պատասխանեց կինը՝ կարծելով, թե խոսքը ջրհորի ջրի մասին է:

Հիսուսն ասաց. «Այն ջուրը, որ Ես կտամ, քեզանում ջրի աղբյուր կլինի, որ կբխի հավիտենական կյանքի համար»:

Կինը ցանկացավ *այդ* ջուրը: Հիսուսն էլ ասաց, որ գնա և իր ամուսնուն կանչի: Երբ կինը պատասխանեց,

թե ամուսին չունի, Նա ասաց. «Ճիշտ ես ասում, քանի որ հինգ ամուսին ես ունեցել, իսկ այն մարդը, որի հետ հիմա ապրում ես, ամուսինդ չէ»: Հիսուսն այդ մասին իմացավ ներքին հայտնությամբ՝ գիտության խոսքով, և այդ պարգևն օգտագործեց նրան դեպի փրկություն տանելու համար:

Գիտության խոսքը կարող է դրսևորվել մի շարք տարբեր կերպերով: Այն կարող է ստացվել լեզուների և լեզուների մեկնության շնորհիվ, մարգարեության պարգևի միջոցով կամ էլ փոխանցվել հրեշտակի օգնությամբ: Աստված բազում կերպերով է գործում: Երբեմն պարգևները միասին են գործում. մենք պարզապես առանձնացնում ենք դրանք, որպեսզի կարողանանք սահմանել:

Երբեմն գիտության խոսքը շփոթում են Աստվածաշնչի խորքային գիտելիքի հետ: Մեկ անգամ մի ծառայող ասաց ինձ, որ ունի գիտության խոսքը, քանի որ շատ է ուսումնասիրել Աստվածաշունչը: Ճիշտ է՝ Աստված օգնում է մեզ հասկանալու Իր Խոսքը, և այն ուսումնասիրելու շնորհիվ մենք գիտելիք ենք ստանում, սակայն գիտելիքի այդ տեսակը գերբնական պարգև չէ: Գիտության խոսքը իրապես գործում է Աստվածաշնչի հետ կապակցված, և Աստված իրապես Իր Խոսքից բաներ է մեզ հայտնում, որ չգիտեինք: Սակայն եթե միայն այդպես լիներ, ապա մենք Խոսքը ուսումնասիրելու կարիք չէինք ունենա: Իսկ Պողոսը երիտասարդ ծառայող Տիմոթեոսին հորդորում է, որ ուսումնասիրի Խոսքը: Նոր կտակարանյան եկեղեցիներից մեկի՝ այս երիտասարդ հովվին ուղղված իր նամակում Պողոսը գրում է. *«Ջանք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես...»* (Բ Տիմ. 2.15): Ուստի Աստծո Խոսքի այսպիսի իմացությունը գալիս է

ուսումնասիրելու շնորհիվ, իսկ գիտության խոսքը՝ որպես Աստծուց տրված գերբնական հայտնություն:

Գիտության խոսքի պարգևի վերաբերյալ մեկ այլ թյուր կարծիք է այն, թե իբր դա այն իրական գիտելիքն է, որը ստանում ենք Աստծո հետ քայլելու շնորհիվ: Ճշմարիտ է այն, որ մարդն Աստծո մասին գիտելիք ստանում է Նրա հետ քայլելու շնորհիվ, սակայն այդ գիտելիքը տարբերվում է գերբնական գիտելիքից:

Հին Կտակարանում գրված այն պատմության մեջ, որտեղ Աստված խոսում է մանուկ Սամուելի հետ, տեսնում ենք գիտության խոսքի և բնական գիտելիքի տարբերության մեկ օրինակ (Ա Թագ. 3.4-10): Սամուելը տաճարում օգնում էր Հեղի մարգարեին: Մի գիշեր Սամուելը լսում է, թե ինչպես է մի ձայն կանչում իր անունը: Կարծելով, թե դա Հեղին է՝ նա վեր է կենում և գնում նրա մոտ: Հեղին նրան չէր կանչել, ուստի Սամուելը վերադառնում է անկողին: Նորից է լսում այդ ձայնը, որը կանչում էր՝ «Սամուե՛լ, Սամուե՛լ», և նորից վազում է Հեղիի մոտ, և Հեղին այս անգամ ևս նրան հետ է ուղարկում անկողին: Երբ դա երրորդ անգամ է կրկնվում, Հեղին հասկանում է, որ թերևս Աստված է խոսում երեխայի հետ, և Սամուելին հորդորում է պատասխանել հաջորդ անգամ, երբ այդ ձայնը նրա անունը կանչի:

Հեղին քայլում էր Աստծո հետ, սակայն նա բավականաչափ հավատարիմ չէր եղել Աստծուն իր երեխաներին դաստիարակելու հարցում: Նա ուներ Աստծո մասին գիտելիք, սակայն այդ գիշեր նա չլսեց Աստծո ձայնը:

Այստեղից հասկանում ենք, որ գիտության խոսքը չի գալիս Աստծո հետ երկարատև փորձառություն ունենալու շնորհիվ: Կա Աստծո մասին գիտելիք, որը ձեռք է

բերվում Նրա հետ սերտ հարաբերությունների և Նրա ճանապարհներին ծանոթ լինելու շնորհիվ, ճիշտ այնպես, ինչպես ավելի լավ ենք ճանաչում նրան, ում հետ ընկերություն ենք անում: Երբ քայլում ենք Աստծո հետ, Նրա մասին մեր գիտելիքն աճում է, սակայն սա նույնը չէ, ինչ գիտության խոսքի գերբնական դրսևորումը:

Աստծո Հոգու նման դրսևորումը միայն երեկվա համար չէր. այն նաև այսօրվա համար է: Հոգով լցված մի մկրտական եղբայր, որն Ամբողջական Ավետարանի գործարար եղբայրների միության տեղի մասնաճյուղի նախագահն էր, մի անգամ պատմեց ինձ իր փորձառության մասին: Նա ասաց. «Անցնում էի մի մեծ հռոմեական կաթոլիկ եկեղեցու մոտով, երբ ինչ-որ բան ներսումս կարծես ասեր, որ կանգ առնեի: Ուստի մեքենաս վարեցի դեպի եկեղեցու կայանատեղին, կանգ առա և այդպես նստած մի փոքր աղոթեցի:

Ինչ-որ բան կարծես հուշեր ինձ, որ քահանան իր սենյակում աղոթում էր, և ես պետք է ներս մտնեի և ձեռք դնեի նրա վրա, ու նա կլցվեր Սուրբ Հոգով: Հապաղում էի. չէի ցանկանում հիմարի կարգավիճակում հայտնվել: Մի փոքր էլ նստած մնացի ու շարունակեցի աղոթել: Հետո որոշեցի, որ վնաս չի լինի, եթե ներս մտնեմ, փորձեմ գտնել քահանային և հասկանամ, թե արդյոք Աստված էր ինձ առաջնորդում»:

Ուստի այդ գործարարը մտնում է եկեղեցի և թակում քահանայի աշխատասենյակի դուռը: Ներսից մի ձայն նրան ներս է հրավիրում. նա բացում է դուռը և տեսնում քահանային՝ նստած գրասեղանի մոտ, առջևում՝ գրքեր: Երբ ներս է մտնում, քահանան վեր է կենում և ողջունում նրան, ու նրանք ծանոթանում են:

Երբ քահանան իմանում է, որ իր հյուրը տեղի Ամբողջական Ավետարանի միության մասնաճյուղի նախագահն է, անմիջապես բացականչում է. «Փա՛ռք Տիրոջը: Հենց նոր կարդում էի Սուրբ Հոգով մկրտության և լեզուներով խոսելու մասին, և Տերը վկայություն տվեց հոգուս, որ ես դրա կարիքն ունեմ: Ես գիտակցում եմ հոգևոր կարիքս: Տասը րոպե առաջ էր, որ գլուխս խոնարհեցի և ասացի. «Տե՛ր, ես այս քաղաքում ոչ մեկին չեմ ճանաչում, ով ունի նման փորձառություն: Խնդրում եմ, ուղարկի՛ր մեկին, ով կգա և կաղոթի ինձ համար: Եվ ահա՛ Դուք»:

Շարունակելով պատմությունը՝ գործարարն ասաց. «Քահանան ծնկի իջավ, ես ձեռք դրեցի նրա վրա, ու նա գրեթե ակնթարթորեն սկսեց խոսել լեզուներով՝ ձեռքերը դեպի երկինք բարձրացնելով»:

Զարմանահրաշ բաներ են տեղի ունենում այսօր: Աստված ամենուր այցելում է ծարավ սրտերին: Նա չի պատրաստվում ուշադրություն դարձնելու հին, հարանվանական սահմաններին, որ մենք գծել ենք, և պիտակներին, որոնցով առաջնորդվում ենք: Ինչ պիտակ ցանկանաք, կարող եք փակցնել դատարկ տարայի վրա, սակայն դրանից տարայի պարունակությունը չի լցվի: Կարևորը պիտակը չէ, այլ պարունակությունը:

Այստեղ տեսանք գիտության խոսքի գերբնական դրսևորման օրինակ, որը շատ նման է Գործ առաքելոցում առաքյալների հետ կատարվող դեպքերին, քանի որ Սուրբ Հոգին դեռևս շարունակում է հայտնել Իրեն նրանց, ովքեր հավատում են: Մենք գերբնական դրսևորումների կարիք ունենք այսօր այնքան, որքան առաջին քրիստոնյաներն ունեին:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով»:

– Ա Կորնթ. 12.8

Գիտության խոսքի պարգևը Հին Կտակարանում

Հատվածներ Աստվածաշնչից՝
Գ Թագ. 19.2-4, 14, 18, Դ Թագ. 5.25, 26, 6.9-12,
Ա Թագ. 9.3, 4, 6, 19, 20, 10.21-23

Առանցքային ճշմարտություն. Գիտության խոսքը կարող է բերել մխիթարություն հուսալքվածներին, ուրախություն՝ սուրբերին, վերականգնել կորսվածը, պարտության մատնել թշնամուն և փառք բերել Տեր Հիսուս Քրիստոսին:

Հոգու պարգևների գերբնական դրսևորումներ տեղի են ունեցել Հին Կտակարանում, այնպես, ինչպես Նոր Կտակարանում: Իրականում Հոգու բոլոր պարգևները՝ բացի լեզուներից և լեզուների մեկնությունից, գործել են Հին Կտակարանում (այս թեման կքննարկենք այդ պարգևներն ուսումնասիրելիս):

Մյուս պարգևները Նոր Կտակարանում սկսել են դրսևորվել Հիսուսի ծառայության ընթացքում, իսկ Պենտեկոստեի օրվանից հետո դրսևորվել են նաև լեզուները և լեզուների մեկնությունը:

Գիտության խոսքը զվարթացրեց հուսահատ ծառային

Գ ԹԱԳ. 19.2-4, 14, 18

2 Եվ Հեզաբելը պատգամավոր ուղարկեց Եղիայի մոտ՝ ասելով. «Աստվածները այսպես անեն և սրանից էլ ավելի անեն, եթե որ էգուց այս ժամանակին քո անձը նրանցից մեկի անձի տեղ չդնեմ»:

3 Եվ այս բանը տեսնելով՝ վեր կացավ, գնաց իր անձը ազատելու համար և հասավ Հուդայի Բերսաբեեն և իր պատանիին թողեց այնտեղ:

4 Բայց ինքը մեկ օրվա ճանապարհ գնաց անապատում և եկավ մի գիհիի տակ նստեց և սրտանց ուզեց, որ մեռնի, և ասաց. «Արդեն բավական է, ո՛վ Տեր, իմ հոգին ա՛ռ, որովհետև ես իմ հայրերից լավը չեմ...»:

14 Եվ նա ասաց. «Մեծ նախանձավորություն ունեցա Զորաց Տեր Աստծո համար, որ Իսրայելի որդիները Քո ուխտը թողել են, Քո սեղանները քանդել են և Քո մարգարեներին սրով սպանել են, և մենակ ես եմ մնացել, և իմ հոգին էլ որոնում են սպանելու...»:

18 «Եվ Ինձ համար թողել եմ Իսրայելի մեջ յոթ հազար հոգի, բոլորն էլ այնպիսի մարդիկ, որ ծունկ չծռեցին Բահաղին, և բոլորն էլ բերանով նրան չհամբուրեցին»:

Եղիա մարգարեն շատ համարձակ էր սարի գագաթին, երբ աղոթում էր, որ կրակ իջներ երկնքից, սակայն

երբ նրան ասացին՝ «Հեզաբել թագուհին ասել է, որ վաղը այս ժամին քեզ գլխատելու է», նա վախեցավ:

Նստեց գիհի ծառի տակ և աղաչեց Աստծուն, որ թույլ տա իրեն մեռնել: Նա ասաց Աստծուն. «Բոլորը նահանջել են՝ բացի ինձնից: Բոլորը ծնկել են Բահաղի առջև, միայն ես եմ մնացել»:

Սակայն Աստված նրան գիտության խոսք տվեց, որով նա քաջալերվեց: Աստված ասաց. «Ո՛չ, դու միակը չես: Ես ինձ համար պահել եմ յոթ հազար հոգու, որոնք չեն ծնկել Բահաղի առջև»:

Գիտության խոսքը բացահայտեց կեղծավորին

Դ ԹԱԳ. 5.25, 26

25 Իսկ ինքը եկավ ու կանգնեց իր տիրոջ առաջ: Եվ Եղիսեն ասաց նրան. «Որտեղի՞ց, Գեեզի»: Եվ նա ասաց. «Ծառադ այս կամ այն կողմը չի գնացել»:

26 Եվ Եղիսեն նրան ասաց. «Չէ՞ որ իմ հոգին գնացել էր, երբ մարդը հետ դարձավ իր կառքից քեզ դիմավորելու. ժամանա՞կն է արծաթ առնելու և հանդերձներ, ձիթենիներ, այգիներ, հոտեր, արջառներ և ծառաներ ու աղախիններ առնելու»:

Բորոտությունից բժշկվելուց հետո Նեեմանը ցանկացավ հագուստ, արծաթ, ոսկի և այլ նվերներ տալ Եղիսե մարգարեին՝ ի նշան շնորհակալության: Եղիսեն, սակայն, մերժեց այդ նվերները: Իսկ Եղիսեի ծառան՝ Գեեզին, վազեց Նեեմանի հետևից և ստեց՝ ասելով. «Ձեր գնալուց հետո երկու երիտասարդ մարգարեներ եկան: Եվ չնայած որ իմ տերը ոչինչ չի ցանկանում վերցնել իր

համար, նա ասաց, որ կարելի է հագուստ, արծաթ ու ոսկի վերցնել այդ մարգարեների համար»: Նեեմանը այնքան ուրախ էր իր բժշկության համար, որ Գեեզիին տվեց նրա ցանկացածից կրկնակի ավելին: Գեեզին թաքցրեց այդ նվերները, քանի որ ոչ միայն ստախոս էր, այլև գող:

Իսկ երբ վերադարձավ, Եղիսեն հարցրեց նրան, թե ուր էր գնացել, ինչին Գեեզին պատասխանեց. «Ոչ մի տեղ, իմ տեր»:

Եղիսեն ասաց. «Իմ սիրտը [հոգին] քեզ հետ էր, երբ հասար կառքին: Ես տեսել եմ քեզ»: Ինչպե՞ս կարող էր Եղիսեն, իր տանը նստած, իմանալ, թե ինչ էր տեղի ունենում մղոններ այն կողմ: Աստված էր նրան հայտնել: Աստված Եղիսեին գերբնական հայտնություն էր տվել տեղի ունեցածի մասին՝ այդպիսով բացահայտելով կեղծավորին:

Թագավորին տրված գիտության խոսքը զգուշացրեց նրան թշնամու ծրագրի մասին

Դ ԹԱԳ. 6.9-12

9 Բայց Աստծո մարդը Իսրայելի թագավորին լուր ուղարկեց՝ ասելով. «Զգուշացի՛ր այստեղով անց կենալուց, որովհետև ասորիները այնտեղ բանակ են տվել»:

10 Եվ Իսրայելի թագավորը մարդ էր ուղարկում այն տեղը, որի համար Աստծո մարդն ասում էր և նրան զգուշացնում: Եվ նա զգուշացավ այն տեղից ոչ թե մեկ և ոչ թե երկու անգամ:

11 Եվ ասորիների թագավորի սիրտը շփոթվեց այս

բանի վրա և իր ծառաներին կանչեց ու ասաց
նրանց. «Չե՞ք իմացնի ինձ, թե մեր մարդկանցից
ով է Իսրայելի թագավորի հետ»:

12 Եվ նրա ծառաներից մեկն ասաց. «Ո՛չ, ո՛վ իմ տեր
թագավոր, այլ Իսրայելում եղող Եղիսե մարգարեն
է իմացնում Իսրայելի թագավորին այն բաները,
որ դու խոսում ես քո անկողնի սենյակում»:

Ամեն անգամ, երբ Ասորեստանը Իսրայելի դեմ դարանակալում էր, Աստծո մարգարեն նրանց ծրագրերը հայտնում էր Իսրայելի թագավորին: Ի վերջո Ասորեստանի թագավորը հավաքեց իր հպատակներին և ասաց. «Մեր մեջ պետք է որ դավաճան լինի, ով մատնում է մեզ»:

Թագավորի ծառաները պատասխանեցին. «Ո՛չ, մեր մեջ դավաճան չկա: Իսրայելում Աստծո մարգարեն է թագավորին ասում այն, ինչ դու քո ննջասենյակում ես խոսում»:

Ասորեստանի դարանակալման մասին տեղեկությունը գերբնական հայտնություն էր: Եղիսե մարգարեն չէր կարող իմանալ թշնամու ծրագրերի մասին. նա Ասորեստանում չէր: Թշնամու ծրագրերը նրան հայտնի դարձան գերբնական կերպով՝ գիտության խոսքի միջոցով, և նրա երկիրը փրկվեց վտանգից:

Ա ԹԱԳ. 9.3, 4, 6, 19, 20

3 Եվ Սավուղի հոր՝ Կիսի էշերը կորան, և Կիսն իր
որդի Սավուղին ասաց. «Երիտասարդներից մեկին
հետդ ա՛ռ և վե՛ր կաց, գնա՛, էշերը որոնի՛ր»:

4 Նա էլ Եփրեմի սարից անցավ և Սաղիսա երկրից էլ
անցավ, բայց չգտան: Եվ Սաղիմի երկրից անցան,
բայց չկային: Եվ Բենիամինյանց երկրից անցավ,
բայց չգտան:

6 Բայց նա նրան ասաց. «Ահա այս քաղաքում Աստծո
մարդ կա, և նա մի պատվավոր մարդ է, ամեն
ինչ, որ ասի, անպատճառ կկատարվի: Եվ հիմա
այնտեղ գնանք, գուցե մեր գնալու ճանապարհը
մեզ իմացնի»:

19 Եվ Սամուելը պատասխանեց Սավուղին և ասաց.
«Տեսանողը ես եմ, վեր եկ առաջս բարձր տեղը,
և այսօր ինձ հետ կերակուր կերեք: Եվ էգուց քեզ
ճանապարհ կդնեմ, և բոլոր սրտումդ եղածը քեզ
կպատմեմ:

20 Եվ քո երեք օրից ի վեր կորած էշերի համար հոգս
մի՛ արա, որովհետև նրանք գտնվել են: Բայց Իս-
րայելի բոլոր վայելչությունը ո՞ւմն է, չէ՞ որ քեզ և քո
հոր բոլոր տան համար է»:

Մինչ Սավուղը դուրս էր եկել փնտրելու իր հոր էշե-
րին, որոնք կա՛մ մոլորվել էին, կա՛մ էլ գողացվել, ինչ-որ
մեկն ասաց. «Ինչո՞ւ չես հարցնում Սամուել մարգարեից:
Նա կիմանա պատասխանը» (Իհարկե, Սամուելը կարող
էր իմանալ միայն այն, ինչ Աստված էր նրան հայտնում,
քանի որ եթե *ամեն բան* իմանար, ապա կլիներ ամենա-
կարող): Երբ Սավուղը հարցրեց նրանից էշերի գտնվե-
լու վայրը, Սամուելը պատասխանեց. «Նրանք արդեն
գտնվել են»:

Գիտության խոսքով գտնվեց թաքնված մարդը

Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 10.21-23

21 Եվ Բենիամինի ցեղը ներկայացրեց իր ազգատոհ-
մերով, և վիճակը Մատրիի ազգատոհմին ընկավ և
Կիսի որդի Սավուղին ընկավ: Եվ նրան որոնեցին,
բայց չգտնվեց:

22 Եվ դարձյալ Տիրոջը հարցրին, թե արդյոք այն
մարդը այստեղ կգա՞: Եվ Տերն ասաց. «Ահա նա
թաք է կացել՝ կարասիների մեջ է»:

23 Եվ վազեցին, նրան առան այնտեղից...

Թեև Սամուելն արդեն օծել էր Սավուղին որպես Իսրայելի թագավորի, երբ եկավ վիճակ գցելու ժամանակը՝ որոշելու, թե ով պետք է լիներ հաջորդ թագավորը, Սավուղը թաքնվեց «կարասիների մեջ»: Երբ չկարողացան նրան գտնել, բոլորին նրան փնտրելու ուղարկելու փոխարեն հարցրին Տիրոջից: Դա ամենակարճ ճանապարհն էր: Նրանք գիտեին, որ Տերը գիտեր Սավուղի գտնվելու վայրը: Եվ Տերը ճշգրտությամբ հայտնեց նրանց, թե որտեղ էր Սավուղը. գնացին այնտեղ և գտան նրան: Այստեղ ևս գործեց գիտության խոսքը: Գիտության խոսքը փաստեր է հայտնում:

Գիտության խոսքի միջոցով կարող է նաև բացահայտվել հիվանդությունը կամ դիվահարությունը: Հիշե՛ք այն, որ գիտության խոսքի բերած հայտնությունը երբեք չի վերաբերում ապագային: Գիտության խոսքը հայտնություն է տալիս *ներկայի* կամ *անցյալի* մասին: Իսկ ինչ վերաբերում է իմաստության խոսքի պարգևին, այն հայտնություն է տալիս *ապագայի*, այդ թվում Աստծո ծրագրի և նպատակի մասին:

Գիտության խոսքը կարող է մխիթարություն բերել հուսալքվածներին, ուրախություն՝ սուրբերին, վերականգնել կորսվածը, պարտության մատնել թշնամուն և փառք բերել Տեր Հիսուս Քրիստոսին:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով»:
– Ա Կորնթ. 12.8

Իմաստության խոսքի պարգևը (մաս 1)

Հատվածներ Աստվածաշնչից՝
Գործք 9.10-16, 8.26-29

Առանցքային ճշմարտություն. Իմաստության խոսքը գերբնական հայտնություն է Սուրբ Հոգուց Աստծո մտքում եղած աստվածային նպատակի և Աստծո կամքի մասին:

Ուսումնասիրելով Հոգու ինը պարգևները՝ տեսնում ենք, որ Սուրբ գիրքը պարզ ասում է՝ դրանք բոլորը *«...միևնույն Հոգին է ներգործում՝ ամեն մեկին բաժանելով ինչպես կամենում է»* (Ա Կորնթ. 12.11):

Որպես Քրիստոսի Մարմին՝ մենք պետք է ցանկանանք, որ Հոգու պարգևները մեզանում դրսևորվեն, սակայն պետք է Սուրբ Հոգու հայեցողությանը թողնենք՝ օգտագործելու նրանց, ում Նա կամենում է օգտագործել:

Սուրբ Հոգին բոլորին նույն կերպ չի օգտագործում: Պարզ գրված է, որ Նա բաժանում է ամեն մեկին, ինչպես *Ինքն* է կամենում: Ուստի մենք պետք է բաց մնանք Նրա համար և թույլ տանք, որ Նրա կամքը կատարվի՝

անգամ հոգևոր պարգևների բաշխման և դրսևորման հարցերում: Եթե ինքներս ցանկանանք անել դա, ապա խնդրի մեջ կհայտնվենք:

Բոլորը չէ, որ կունենան Հոգու *բոլոր* պարգևները, քանի որ Աստվածաշունչն ասում է. *«Որովհետև ՄԵԿԻՆ Հոգուց տրված է իմաստության խոսք, և Եվ ՈՒՐԻՇԻՆ՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով»* (Ա Կորնթ. 12.8): Այստեղից պարզ է դառնում, որ բոլոր պարգևները հավասարապես տրված չեն բոլորին: Որպես Քրիստոսի Մարմին՝ եկեք ցանկանանք այս պարգևներն ունենալ, սակայն եկեք նաև թույլ տանք, որ Սուրբ Հոգին դրսևորի Իրեն մեզանում, ինչպես *Ինքն* է կամենում:

Ինչ վերաբերում է այս խոսքին՝ «*...մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով...»,* մարդիկ երբեմն այս պարգևները կոչում են իմաստության *պարգև* կամ գիտության *պարգև*: Սակայն սա ճիշտ չէ, մենք պետք է անվանենք դրանք այնպես, ինչպես Աստվածաշունչն է անվանում, այլապես շփոթության մեջ կհայտնվենք: Եթե շանն անվանենք կատու, մարդկանց շփոթության մեջ կգցենք: Սուրբգրային այս խոսքում չի խոսվում ընդհանուր առմամբ իմաստության կամ գիտության մասին: Նկատի է առնված հենց այն, ինչ գրված է՝ իմաստության *խոսք* և գիտության *խոսք*:

Աստված ունի ամբողջ իմաստությունն ու գիտությունը: Նա գիտի ամեն բան, սակայն երբեք ոչ մեկին չի հայտնում *ամենը*, ինչ գիտի: Իր իմացածից պարզապես մի *խոսք* է տալիս: Խոսքը նախադասության *մաս* է: Նույնը վերաբերում է իմաստությանը: Աստված մարդուն տալիս է ոչ թե իմաստության *պարգև*, այլ իմաստության *խոսքի* պարգև՝ միայն խոսք կամ մաս, որը Նա ցանկանում է, որ մարդն իմանա:

Օրինակ՝ եթե իրավաբանական խորհրդատվության

կարիք ունենաք, կզանգեք իրավաբանի: Սակայն իրավաբանը ձեզ չի հաղորդի իրավական ոլորտում իր ունեցած ամբողջ իմաստությունը, քանի որ դուք *ամբողջի* կարիքը չունեք: Նա ձեզ կհաղորդի իրավական ոլորտին վերաբերող իմաստության մի *մասը* միայն՝ մի խոսք, որը մասնավորապես վերաբերում է ձեր դեպքին: Նա տալիս է ձեզ իմաստության՝ իրավական իմաստության «խոսք», և իրականում դա ամենն է, ինչ ձեզ պետք է:

Գիտության խոսքը գերբնական հայտնություն է Սուրբ Հոգուց Աստծո մտքում եղած որոշ փաստերի մասին՝ մարդկանց, վայրերի կամ իրողությունների վերաբերյալ: *Իմաստության խոսքը* գերբնական հայտնություն է Սուրբ Հոգուց Աստծո մտքում եղած աստվածային նպատակի և Աստծո կամքի մասին: Այս երկու պարգևների՝ գիտության խոսքի և իմաստության խոսքի միջև տարբերությունն այն է, որ գիտության խոսքով տրված հայտնությունը միշտ վերաբերում է *ներկային* կամ *անցյալում* տեղի ունեցած ինչ-որ բանի, մինչդեռ իմաստության խոսքը միշտ վերաբերում է *ապագային*:

Հաճախ գիտության խոսքը և իմաստության խոսքը միասին են գործում

Այս երկու պարգևների մասին սովորեցնելիս մենք սովորաբար առանձնացնում և առանձին ենք քննարկում դրանք, սակայն հաճախ այս պարգևները *միասին* են գործում:

Օրինակ՝ 2-րդ դասում նշեցինք, որ Պատմոս կղզում Տերը Հովհաննեսի հետ խոսեց տեսիլքի միջոցով: Հիսուսը հայտնվեց Հովհաննեսին և պատմեց նրան այդ ժամանակ Փոքր Ասիայում գտնվող յոթ եկեղեցիների վիճակի մասին: Այդ յոթ եկեղեցիների ներկա վիճակի մասին

տրված գիտելիքը գիտության խոսքի դրսևորում էր:

Այնուհետև Տերը շարունակեց և Հովհաննեսին իմաստության խոսք տվեց: Հիսուսը ցուցումներ տվեց եկեղեցիներից յուրաքանչյուրին այն մասին, թե ինչ պետք է անեին ապագայում՝ դրանցից յուրաքանչյուրի համար Իր ծրագրի և նպատակի համաձայն:

Երկու պարգևների միասնական գործողության մեկ այլ օրինակ ենք տեսնում եկեղեցու անդամ Անանիայի մասին պատմության մեջ:

ԳՈՐԾՔ 9.10-16

10 Եվ Դամասկոսում մի աշակերտ կար՝ անունն Անանիա: Եվ Տերը տեսիլքի մեջ նրան ասաց.

11 «Անանիա»: Եվ նա ասաց. «Ահա ես, Տե՛ր»: Եվ Տերը նրան ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ այն փողոցը, որ կոչվում է Ուղիղ: Եվ Հուդայի տանը որոնի՛ր մի Սողոս անունով տարսոնացի մարդու, որովհետև ահա աղոթք է անում»:

12 Եվ նա տեսիլքի մեջ տեսավ մի Անանիա անունով մարդու, որ մտավ և ձեռքը դրեց իր վրա, որ տեսնի:

13 Անանիան էլ պատասխանեց. «Տե՛ր, ես այն մարդու համար շատերից լսեցի, թե որչափ չարիք արեց Քո սուրբերին Երուսաղեմում:

14 Եվ այստեղ էլ քահանայապետներից իշխանություն ունի, որ այն ամենքին կապի, որ Քո անունը կանչում են»:

15 Տերն էլ ասաց նրան. «Գնա՛, որովհետև նա Ինձ համար ընտրված անոթ է, որ Իմ անունը տանի հեթանոսների, թագավորների և Իսրայելի որդիների առաջ:

16 Որովհետև Ես ցույց կտամ նրան, թե որչափ պիտի չարչարվի Իմ անունի համար»:

Այս հատվածում գործողության մեջ տեսնում ենք թե՛ գիտության խոսքի պարգևը և թե՛ իմաստության խոսքի պարգևը: Տերն Անանիային ասաց, թե ուր պետք է գնար Սողոսին գտնելու համար, ինչպես նաև այն, որ Սողոսն աղոթել և տեսիլք էր տեսել: Տերն Անանիային անգամ ասաց, թե որ փողոց, որ տուն և ում մոտ պետք է գնար: Բոլոր նշվածները ներկային վերաբերող փաստեր էին: Սուրբ Հոգին նաև հայտնեց Անանիային, որ Սողոսը տեսիլքով տեսել էր Անանիա անունով մի մարդու, որը ձեռք էր դնելու իր վրա, և իր տեսողությունը վերականգնվելու էր: Սա ևս Անանիային տեսիլքի միջոցով տրված հայտնություն էր Սողոսին վերաբերող ներկա փաստերի մասին: Ուստի այստեղ տեսնում ենք, թե ինչպես է գործում գիտության խոսքը:

Սակայն Անանիային նաև այլ հայտնություն տրվեց: Այդ հայտնությունը իմաստության խոսքով եղավ, քանի որ դրանով բացահայտվեցին Աստծո ծրագիրն ու նպատակը, ինչը կարող ենք կարդալ 15-րդ խոսքում. *«Տերն էլ ասաց նրան. «Գնա՛, որովհետև նա Ինձ համար ընտրված անոթ է, որ Իմ անունը տանի հեթանոսների, թագավորների և Իսրայելի որդիների առաջ»»:*

Շարունակելով հայտնություն տալ Անանիային՝ Տերն ասաց. *«Որովհետև Ես ցույց կտամ նրան, թե որչափ պիտի չարչարվի Իմ անունի համար»:* Դա չէր նշանակում, որ Սողոսը (ով հետագայում անվանվեց Պողոս) պետք է հիվանդ լիներ հանուն Հիսուսի, սակայն նա պետք է անցներ շատ հալածանքներով և ֆիզիկական դժվարություններով: Այդպես էլ եղավ: Նրան քարկոծեցին և թողեցին մահամերձ վիճակում: Հրեաները հինգ անգամ երեսունհինգական մտրակի հարված հասցրին նրան: Երեք անգամ նավակոծության ենթարկվեց: Ուր էլ գնում էր Պողոսը, մար-

դիկ նրա դեմ դավեր էին նյութում. նա շատ անգամներ է չարչարվել Աստծո համար: Պողոսի մեծ չարչարանքների մասին հայտնությունը, որը տրվեց Անանիային, ևս իմաստության խոսքի գերբնական պարգևի դրսևորում էր:

Գործք առաքելոց 8-րդ գլխում տեսնում ենք իմաստության խոսքի պարգևի մեկ այլ դրսևորում, որը տրվել էր եկեղեցու անդամներից մեկին՝ Փիլիպոսին, որ այն ժամանակ սարկավագ էր և նշանակված էր սեղանների մոտ ծառայելու: Հետագայում Աստված նրան ավետարանիչ դարձրեց:

ԳՈՐԾՔ 8.26-29

26 Եվ Տիրոջ հրեշտակը խոսեց Փիլիպոսի հետ և ասաց. «Վե՛ր կաց և գնա՛ հարավային կողմը՝ այն ճանապարհը, որ Երուսաղեմից իջնում է Գազա, որ անապատ է»:

27 Եվ նա վեր կացավ, գնաց: Եվ ահա մի եթովպացի մարդ՝ եթովպացիների Կանթակա թագուհու ներքինի մի իշխանը, որ նրա բոլոր գանձերի վրա էր, որ եկել էր Երուսաղեմ երկրպագություն անելու

28 և հետ դառնալիս իր կառքում նստած կարդում էր Եսայիա մարգարեի գիրքը:

29 Հոգին էլ Փիլիպոսին ասաց. «Մոտեցի՛ր և հասի՛ր այդ կառքին»:

Աստված Իր ծրագիրը և նպատակը հայտնեց Փիլիպոսին հրեշտակի բերած ուղերձի միջոցով: Այս ուղերձով Աստված ուղղորդեց Փիլիպոսի քայլերն այնպես, ինչպես ցանկացած ոք կարող է առաջնորդվել Հոգով: Ուղերձում ասվում էր, որ նա պետք է գնար անապատ. Փիլիպոսը հավատքով պետք է աներ այդ քայլը: Հրեշտակի ուղերձը հայտնություն էր, որով ինչ-որ բան էր բացահայտվում

Աստծո նպատակի և ծրագրի մասին՝ ոչ Աստծո ամբողջ ծրագիրը, այլ մի մասը՝ միայն մեկ *խոսք*: Ուստի այստեղ գործում էր իմաստության խոսքը:

Բնական իմաստություն

Իմաստության խոսքը հաճախ շփոթում են սովորական իմաստության հետ, որն օգտագործվում է կյանքի հանգամանքների հետ առնչվելիս: Սակայն կյանքի հանգամանքների հետ առնչվելու համար անհրաժեշտ իմաստությունը Սուրբ Հոգու հոգևոր պարգև չէ:

Հեսուի ծառայության սկզբում Աստված ասաց, որ նրա հաջողության բանալին Աստծո Խոսքի շուրջ խորհելն է. *«Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամիտ կլինես»* (Հեսու 1.8):

Մեկ այլ թարգմանությունում ասվում է. «Հաջողակ կլինես և կկարողանաս իմաստուն վարվել կյանքի տարբեր հանգամանքներում»:

Այո՛, Աստծո Խոսքի իմացությունից պետք է իմաստություն քաղել, սակայն իմաստությունը իմաստության խոսքի գերբնական դրսևորումը չէ:

Ոմանք կարծում են, թե Սողոմոնի իմաստությունը իմաստության խոսքի գերբնական դրսևորում էր, սակայն դա այդպես չէր: Սողոմոնի իմաստությունն Աստծուց էր տրված: Նման իմաստություն խոստացված է նաև մեզ Հակոբոս 1.5-ում. *«Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան»*:

Իմաստությունը, որի մասին խոսում է Հակոբոսը, վերաբերում է կյանքի տարբեր հանգամանքներում իմաստուն վարվելուն, որպես քրիստոնյա վարվելու իմաստության մասին է խոսքը: Աստված խոստացել է, որ այս տեսակի իմաստությունը, որը ես կոչում եմ կյանքի տարբեր իրավիճակներում կիրառելի ընդհանուր իմաստություն, հասանելի է ամեն մեկին, ով կխնդրի այն: Աստված է իմաստություն տվողը, սակայն դա դեռևս *իմաստության խոսքի* գերբնական դրսևորում չէ:

Հավատացյալներին ուղղված իր խոսքում Հակոբոսն ասում է, որ եթե *ինչ-որ մեկը* իմաստության պակասություն ունի, թո՛ղ խնդրի Աստծուց: Իսկ մեր ուսումնասիրած խոսքում Պողոսն ասում է՝ «*Մեկին* տրված է իմաստության խոսք». *մեկին*, ո՛չ *բոլորին*, այլ *մեկին*: Սա նշանակում է՝ բոլորը չէ, որ ունենալու են այդ դրսևորումները: Պողոսն իր խոսքը եզրափակում է՝ ասելով, որ Սուրբ Հոգու գերբնական պարգևների դրսևորումները տրվում են միայն այնպես, ինչպես Հոգին է կամենում:

Երբ Աստված ուզում է Իր միտքը, նպատակն ու ծրագիրը գերբնական ձևով հայտնել մարդուն, Նա դա անում է իմաստության խոսքի գերբնական դրսևորմամբ: Եվ իմաստության խոսքի այդ պարգևը պետք է տարբերակել կյանքի տարբեր իրավիճակներում կիրառելի ընդհանուր իմաստությունից, որը Նա կտա յուրաքանչյուրին, ով կխնդրի:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք...»:
– Ա Կորնթ. 12.8

Իմաստության խոսքի պարգևը (մաս 2)

Հատվածներ Աստվածաշնչից՝
Գործք 11.28-30, 21.10, 11

Առանցքային ճշմարտություն. Աստված ապագայի վերաբերյալ Իր նպատակն ու ծրագիրը բացահայտում է իմաստության խոսքի միջոցով:

Երբեմն այն, ինչ մենք կոչում ենք մարգարեություն, բոլորովին մարգարեության պարզ պարգևը չէ: Եթե այն, ինչ ասվում է, բացահայտման տարր է պարունակում, ապա իրականում *իմաստության խոսք* է:

Մարգարեության պարզ պարգևը չի պարունակում բացահայտում: Ըստ Ա Կորնթացիս 14.3-րդ խոսքի՝ մարգարեության պարգևը *«...մարդկանց հետ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ և ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ և ՍՓՈՓՈՒԹՅՈՒՆ է խոսում»:* Եթե մարդն օգտագործում է միայն մարգարեության պարզ պարգևը, եթե նրա ծառայության մեջ չեն դրսևորվում մյուս պարգևները, ապա նրա մարգարեությունը կբերի միայն շինություն, մխիթարություն և սփոփանք:

Մյուս կողմից՝ Հին Կտակարանի մարգարեներն իրենց

կյանքերում պետք է ունենային Սուրբ Հոգու պարգևները, որպեսզի կարողանային ստանձնել մարգարեի ծառայությունը, քանի որ ապագայի վերաբերյալ կանխատեսումներ էին անում: Ինչպես տեսանք վերևում, մարգարեության պարզ պարգևը կանխատեսումներ չի ենթադրում: Ուստի, չնայած որ մարգարեների կանխատեսումները տրվում էին մարգարեության միջոցով, իրականում դրանք իմաստության խոսքեր էին: Օրինակ՝ մենք ավտոմեքենա ենք վարում, սակայն ավտոմեքենա չենք: Նույն կերպ իմաստության խոսքը երբեմն փոխանցվում է մարգարեության միջոցով, սակայն իրականում մարգարեություն չէ: Այն իմաստության խոսք է:

Իմատության խոսքը կարող է տրվել տարբեր կերպերով

Ինչպես գիտության խոսքը, այնպես էլ իմաստության խոսքը կարող է տրվել լսելի ձայնի, տեսիլքի կամ երազի միջոցով: Այն կարող է դրսևորվել նաև մարգարեության բանավոր պարգևի, լեզուների կամ մեկնության միջոցով:

Հին Կտակարանում Հովսեփը իմաստության խոսք ստացավ երազի միջոցով, որը բացահայտեց Աստծո ծրագիրն ու նպատակը նրա ապագայի համար:

Մովսեսը օրենքի հայտնությունը ստացավ Աստծո լսելի ձայնով: Օրենքը վերաբերում էր Իսրայելի համար Աստծո նպատակին, ուստի այդտեղ պետք է գործեր իմաստության խոսքը:

Նույնը վերաբերում է Հին ուխտի մարգարեներին, որոնք շատ բաներ են մարգարեացել Իսրայելի ապագայի, Նոր ուխտի, Մեսիայի գալստյան և գալիք իրադարձությունների մասին: Նրանք այդ ամենը փոխանցել են

մարգարեության միջոցով, սակայն իրականում ստացել էին իմաստության խոսք:

Ամբողջ Հին Կտակարանում, երբ մարգարեները մարգարեանում էին, իմաստության խոսքը և գիտության խոսքը միասին էին գործում: Նոր Կտակարանում տեսնում ենք նույն պատկերը:

ԳՈՐԾՔ 11.28-30

28 Եվ նրանցից մեկը՝ անունն Ագաբոս, վեր կացավ, Հոգով իմաց տվեց, թե ամբողջ աշխարհի վրա մեծ սով է լինելու, որ Կղոդիոս կայսեր ժամանակ եղավ էլ:

29 Բայց աշակերտները որոշեցին, որ իրենցից ամեն մեկը, որքան որ կարող էր, օգնություն ուղարկի Հրեաստանում բնակված եղբայրներին,

30 որ արին էլ և ուղարկեցին երեցների մոտ՝ Բառնաբասի և Սողոսի ձեռքով:

Ագաբոսը մարգարեացավ, որ սով է լինելու, և մարդիկ նրան հավատացին, քանի որ նա ազնիվ մարդ էր, որի ծառայությունը հաստատված էր (մենք չենք կարող հավատալ ամեն բանի, ինչ ամեն մարդ ասում է. պետք է կարողանանք զանազանել, թե ինչն է համապատասխանում Աստծո Խոսքին): Սակայն երբ Ագաբոսը մարգարեացավ սովի մասին, մարդիկ միանգամից սկսեցին պատրաստվել, որ օգնություն ուղարկեն սովից տուժածներին:

Ագաբոսի մասին կրկին կարդում ենք Գործք 21-րդ գլխում: Պողոսը և նրա հետ լինողները, այդ թվում նաև Ղուկասը, որ Գործ առաքելոց գրքի հեղինակն է, Փիլիպոսի տանն էին:

ԳՈՐԾՔ 21.10, 11

10 Եվ երբ մենք այնտեղ շատ օրեր մնում էինք, Հրեաստանից մի մարգարե իջավ՝ անունն Ագաբոս:

11 Եվ նա մեզ մոտ եկավ, Պողոսի գոտին առավ, իր ձեռքերը և ոտքերը կապեց և ասաց. «Սուրբ Հոգին այսպես է ասում՝ այն մարդին, որի գոտին է սա, հրեաները Երուսաղեմում այսպես կկապեն և հեթանոսների ձեռքը կմատնեն»:

Ուշադրությունն դարձրեք, որ այստեղ ինչ-որ բան բացահայտվեց: *Երբ ինչ-որ տեսակի ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ է տեղի ունենում, դա միշտ նշանակում է, որ գործում է իմաստության խոսքը, գիտության խոսքը կամ հոգիների զանազանությունը*, քանի որ սրանք են հայտնության երեք պարգևները. Աստվածաշնչում ուրիշները նշված չեն: Պողոսին վերաբերող այդ բացահայտումը գիտության խոսք չէր, քանի որ վերաբերում էր *ապագային*: «Գիտությունն» իր մեջ ամփոփում է անցյալ և ներկա փաստերն ու իրողությունները, որոնք մեզ հայտնի են դառնում Սուրբ Հոգու միջոցով: «Իմաստության» խոսքը Սուրբ Հոգու միջոցով մեզ հայտնում է ապագան. Տերն Իր աստվածային իմաստությամբ գիտի ամբողջ ապագան:

Այնուհետև Ղուկասն ասում է. *«Եվ երբ այս լսեցինք, աղաչում էինք մենք և այն տեղացիք էլ, որ վեր չելնի Երուսաղեմ: Այն ժամանակ Պողոսը պատասխանեց և ասաց. «Ի՞նչ եք անում, որ լաց եք լինում և սիրտս ճմլում, որովհետև ես ոչ միայն կապվելու, բայց Երուսաղեմում մեռնելու էլ պատրաստ եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունի համար»»* (խ. 12, 13):

Դրանից հետո Ղուկասը գրում է. *«Եվ երբ նա ականջ*

չդրեց, լուռ մնացինք և ասացինք. «Տիրոջ կամքը լինի»» (խ. 14): Դա Աստծո կամքի հայտնությունն էր, որը պետք է կատարվեր ապագայում, ուստի իմաստության խոսք էր: Եվ այն կատարվեց:

Իմաստության խոսքը կարող է լինել պայմանական

Հին Կտակարանում կան օրինակներ, երբ մարգարեները Աստծուց խոսքեր են ստացել, որոնք չեն իրականացել. որոշ բաներ պայմանական են: Եզեկիա թագավորի դեպքում Աստված Եսայիային իմաստության խոսք էր տվել թագավորի ապագայի վերաբերյալ՝ Աստծո ծրագիրն ու նպատակը ներկա պայմաններում: Եսայիան ասաց Եզեկիային. *«Կտա՛կ արա քո տան մասին, որովհետև դու պիտի մեռնես ու չապրես»* (Դ Թագ. 20.1):

Եսայիան հայտնեց ուղերձը և պատրաստվեց լքելու պալատը: Իսկ Եզեկիան շրջվեց դեպի պատը, ապաշխարեց իր սխալների համար, լացեց և աղոթեց Աստծուն՝ հիշեցնելով Նրան, որ ինքն առաջներում քայլել է Աստծո հետ և պահել Նրա պատվիրանները:

Մինչ Եսայիան կհասցներ դուրս գալ բակից, Տիրոջից հրահանգ ստացավ վերադառնալ Եզեկիայի մոտ՝ մեկ այլ իմաստության խոսքով (իմաստության խոսք էր, քանի որ ապագային էր վերաբերում): «Ասա՛ նրան, որ ևս տասնհինգ տարի եմ տալու նրան»,- ասաց Աստված:

Աստված խոսեց նաև Հովնան մարգարեի հետ և իմաստության խոսք տվեց նրան, այն մասին, որ Նինվեն կործանվելու էր: Սա իմաստության խոսք էր, քանի որ վերաբերում էր ապագայի վերաբերյալ Աստծո ծրագրին և նպատակին:

Հովնանի հոգը չէր՝ կկործանվեր Նինվեն, թե ոչ: Նա չէր ցանկանում զգուշացում տալ Իսրայելի թշնամիներին: Սակայն Աստված աշխատեց նրա հետ այնքան, մինչև նա հնազանդվեց գնալ և քարոզել Նինվեի բնակիչներին՝ զգուշացնելով նրանց գալիք դատաստանի մասին, եթե չդառնային դեպի Աստված: Նրանք ապաշխարեցին և այդ սերնդի վրա դատաստան չեկավ (թեև, ի վերջո, այն եկավ):

Իմաստության խոսքով առանձացվում էին նրանք, ովքեր կանչված էին հատուկ ծառայության

Իմաստության խոսքի պարգևը օգտագործվում է նաև՝ հայտնելու Աստծո ծրագիրը նրանց, ում Նա ցանկանում է օգտագործել ծառայության մեջ: Նման օրինակ տեսանք նախորդ դասում: Աստված ուղարկեց Անանիային՝ աղոթելու Սողոսի համար՝ ասելով Անանիային. *«...նա ինձ համար ընտրված անոթ է, որ Իմ անունը տանի հեթանոսների, թագավորների և Իսրայելի որդիների առաջ...»* (Գործք 9.15):

Իմաստության խոսքով հաստատվել է Աստծո պաշտպանությունը

Իմաստության խոսքը տրվում է նաև հաստատելու այն փրկությունը, որը գալիս է աղետի ժամանակ: Երբ Պողոսը նավի վրա էր՝ Հռոմի ճանապարհին՝ կայսրի առջև իր դեմ հարուցված դատական գործը բողոքարկելու նպատակով, սաստիկ փոթորիկ բարձրացավ: Պողոսը իմաստության խոսք էր ստացել իր հետ նավարկողների համար դեռ մինչև ճանապարհ ընկնելը: Նա ասել էր. «*...տեսնում եմ, որ այս նավարկությունը նեղությունով և*

շատ վնասով է լինելու...» (Գործք 27.10): Սակայն քանի որ հարավային քամին մեղմ փչում էր, նրանք անտեսեցին Պողոսի զգուշացումն ու ճանապարհ ընկան:

Եթե լսեին Պողոսին, չէին կորցնի նավը և բոլոր ապրանքները: Սակայն հրաժարվելով նրա զգուշացմանը ականջ դնելուց՝ նրանք ստիպված եղան ամեն ինչ դուրս նետել նավից: Հույսն ամբողջովին մարել էր, երբ այդ աղետի ժամանակ Պողոսը առաջ եկավ, քանի որ երկնքից խոսք էր ստացել:

Պողոսն ասաց. *«Որովհետև այս գիշեր երևաց ինձ այն Աստծո հրեշտակը, որ ես Նրանն եմ և Որին էլ պաշտում եմ: Եվ ասաց. «Մի՛ վախեցիր, Պողո՛ս.... Աստված շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ նավողներին»»* (Գործք 27.23, 24): Պողոսն ասաց. «Նավը խորտակվում է և կորչելու է: Լսեք, թե ինչ եմ ասում ձեզ: Պիտի մնաք նավի մեջ»: Նրանք պատրաստվում էին լքելու նավը, սակայն բոլորը մնացին նավի մեջ, և ոչ մեկը չմահացավ:

Որքա՜ն շատ ունենք այսօր նման գերբնական դրսևորումների կարիք: Փա՛ռք Աստծուն, որ *կարող ենք և լսում ենք խոսքեր երկնքից Հոգու պարգևների դրսևորման շնորհիվ*:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք...»:
– Ա Կորնթ. 12.8

Հոգիների զանազանության պարգևը

Հատվածներ Աստվածաշնչից՝
Ելից 33.20-23, Գործք 16.16-18

Առանցքային ճշմարտություն. Հոգիների զանազանությունը հոգևոր աշխարհի ներըմբռնում է տալիս:

Ամփոփ ներկայացնելու համար Հոգու ինը պարգևները կարելի է երեք խմբի բաժանել՝ երեք պարգև, որոնք ինչ-որ բան են *բացահայտում*, երեք պարգև, որոնք ինչ-որ բան են *անում*, և երեք պարգև, որոնք ինչ-որ բան են *ասում*:

Հայտնության երեք պարգևները, որոնք ինչ-որ բան են *բացահայտում*, հետևյալն են՝ իմաստության խոսք, գիտության խոսք և հոգիների զանազանություն:

Զորության պարգևները, որոնք ինչ-որ բան են *անում*, հետևյալն են՝ հավատքի պարգև, հրաշագործություններ և բժշկությունների պարգևներ:

Եվ խոսքի պարգևները, որոնք ինչ-որ բան են *ասում*, հետևյալն են՝ մարգարեություն, այլևայլ լեզուներ և լեզուների մեկնություն:

Այս պարգևները հաճախ միասին են գործում, ինչպես լեզուների և մեկնության պարագայում: Բաժանումն արված է այն նպատակով, որ կարողանանք տարբերակել և ուսումնասիրել դրանք:

Նախորդ դասերին քննարկել ենք երկուսն այն երեք պարգևներից, որոնք բացահայտող բնույթ ունեն՝ *իմաստության խոսքը* և *գիտության խոսքը*: Այս դասի շրջանակում կանդրադառնանք հայտնության երրորդ պարգևին, որն է *հոգիների զանազանությունը*:

Հայտնության երեք պարգևներից ամենակարևորը, իհարկե, իմաստության խոսքն է: Դրանք հերթականությամբ թվարկված են ըստ կարևորության՝ (ա) իմաստության խոսք, (բ) գիտության խոսք և (գ) հոգիների զանազանություն:

Իմացության ոլորտին վերաբերող բոլոր բաները՝ փաստեր, իրադարձություններ, նպատակ, դրդապատճառ, ծագում՝ մարդկային, աստվածային կամ սատանայական՝ անցյալ, ներկա թե ապագա, տրվում են այս երեք պարգևների առանցքային տիրույթում: Դրանք իրենց համապարփակ շրջանակներում ընդգրկում են ամենը, ինչ Աստված գիտի: *Եվ չկա մի բան, որն Աստված գիտի, և որը հնարավոր չէ հայտնել մարդուն այս երեք պարգևներից մեկի կամ մի քանիսի միջոցով, ինչպես Հոգին է կամենում:*

Իմաստության խոսքը հայտնում է մեզ Աստծո միտքն ու նպատակը: Հասկանալի է, թե ինչու է այս պարգևը առաջինը դասվում, քանի որ Աստծո միտքն ու նպատակն իմանալն ավելի կարևոր է, քան ցանկացած այլ բան: Իմաստության խոսքը վերաբերում է ապագային:

Գիտության խոսքը հայտնում է մեզ ներկա կամ անցյալ բաները:

Հոգիների զանազանությունը տալիս է մեզ հոգևոր

աշխարհի ներըմբռնում: Իրականում այն ունի առավել սահմանափակ տիրույթ, քան մյուս երկու պարգևները, քանի որ բացահայտում է միայն մեկ դասակարգ՝ հոգիներին: Հայտնությունները, որոնք տրվում են իմաստության խոսքի և գիտության խոսքի միջոցով, ավելի լայն են, վերաբերում են մարդկանց, վայրերի և երևույթների, մինչդեռ հոգիների զանազանությունը միայն հոգևոր աշխարհի գերբնական ներըմբռնում է տալիս:

Թույլ տվեք հենց այստեղ էլ նշել, որ այն «դևերի զանազանություն» չէ, ոչ էլ «չար ոգիների զանազանություն» է: Ասել, թե հոգիների զանազանությունը վերաբերում է միայն դևերին, մոլորեցնող է: Այն հոգևոր աշխարհի՝ թե՛ բարի հոգիների և թե՛ չար ոգիների գերբնական ներըմբռնում է: Դրանում ներառված է չար ոգիների զանազանությունը, սակայն շատերը կարծում են, թե այս պարգևը վերաբերում է միայն *չար* ոգիների զանազանությանը, ինչն էլ նրանց շփոթության մեջ է գցում:

Աստծո կերպարանքի զանազանությունը

Աստված թույլ տվեց, որ Մովսեսը տեսնի հոգևոր աշխարհը: Նա ասաց Մովսեսին. «Դու չես կարող նայել Իմ երեսին, սակայն Ես քեզ կթաքցնեմ ժայռի խոռոչում և ձեռքս կդնեմ քո դեմքին: Ես կանցնեմ քո մոտով և թույլ կտամ, որ հետևից տեսնես Ինձ»:

ԵԼԻՑ 33.20-23

20 Եվ ասաց. «Դու Իմ երեսը չես կարող տեսնել,
որովհետև մարդ չի կարող Ինձ տեսնել և ապրել»:
21 Եվ Եհովան ասաց. «Ահա ինձ մոտ մի տեղ կա, և
այդ ժայռի վրա կանգնի՛ր:

22 Եվ կլինի, որ Իմ փառքն անցնելիս քեզ ժայռի խոռոչի մեջ կդնեմ և քեզ Իմ ձեռքով կծածկեմ, մինչև որ Ես անցնեմ:

23 Հետո Իմ ձեռքը վեր կառնեմ, և Իմ հետևը կտեսնես, բայց Իմ երեսը չի տեսնի:

Սա օրինակն է այն բանի, որ Մովսեսը տեսավ հոգևոր աշխարհը: Նա կարողացավ տեսնել Աստծո կերպարանքը (կամ նմանությունը):

Աստծո Խոսքի մեջ հանդիպում ենք մարդկանց, որոնք տեսիլքով կարողացել են տեսնել Աստծո կերպարանքը: Նրանք չեն տեսել Աստծուն, այլ տեսել են Աստծո կերպարանքը: Երբ Նա Իրեն հայտնում էր, նրանք տեսնում էին հոգևոր աշխարհը: Օրինակ՝ Եսայիան ասել է. *«Ոզիա թագավորի մեռած տարին տեսա Տիրոջը բարձր և վերացած աթոռի վրա նստած...»* (Ես. 6.1): Սա հոգիների զանազանության դրսևորում է:

Հարություն առած Քրիստոսի զանազանությունը

Հոգիների զանազանության կամ հոգևոր աշխարհը տեսնելու միջոցով հնարավոր է անգամ զանազանել հարություն առած Քրիստոսին: Իրականում Նրա համբարձվելուց և բարձրում նստելուց հետո ոչ ոք *ֆիզիկապես* չի տեսել Նրան: Նա նստած է Հոր աջ կողմում, որտեղ «միշտ կենդանի է, որ մեզ համար բարեխոսություն անի» (Եբր. 7.25): Սակայն հոգիների զանազանության գերբնական պարգևի շնորհիվ մարդիկ երբեմն կարողացել են տեսնել հոգևոր աշխարհն ու Հիսուսին:

Սուրբ Հոգու զանազանությունը

Հովհաննեսը Պատմոս կղզու իր տեսիլքում տեսավ Սուրբ Հոգուն՝ Աստծո գահի առջև յոթ հոգիների տեսքով: Սա պարզապես նշանակում էր, որ հոգևոր աշխարհը բացվեց Հովհաննեսի համար, և նա տեսավ Աստծո Հոգու յոթ կողմերը:

Բոլոր նման տեսիլքները հոգիների զանազանության պարգևի դրսևորում են: Տեսիլքի հետ կարող են տրվել իմաստության խոսք և/կամ գիտության խոսք, սակայն տեսիլքն ինքը հոգիների զանազանության պարգև է, քանի որ այդ պահին մարդու համար բացվում է հոգևոր աշխարհը: «Զանազանել» նշանակում է «տեսնել», ուստի մարդը զանազանում կամ տեսնում է հոգևոր աշխարհը: Իսկ հոգևոր աշխարհում կան թե՛ աստվածային հոգիներ *և* թե՛ չար ոգիներ:

Հոգիների զանազանությունը նաև սերովբեների, քերովբեների, հրեշտակապետների, հրեշտակների զորքի, սատանայի և նրա լեգեոնների զանազանությունն է: Բացի այդ՝ այն վերաբերում է մարդկային հոգու՝ դրա բարի և չար միտումների զանազանությանը:

Հոգիների զանազանություն

Հոգիների զանազանության պարգևը բացահայտում է նաև, թե ինչ տեսակի հոգի է կանգնած որոշակի հոգևոր դրսևորման հետևում՝ բարի, թե չար: Սրա օրինակը կարող ենք տեսնել Պողոս առաքյալի ծառայության մեջ:

ԳՈՐԾՔ 16.16-18

16 Եղավ, որ մենք աղոթքի գնալիս մի աղախին պատահեց մեզ, որ հարցուկ ոգի ուներ, որ կախար-

դությունով իր տերերին շատ շահ էր բերում:

17 Սա,Պողոսի և մեր հետևից ընկած, աղաղակում էր
և ասում. «Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն
են, որ ձեզ պատմում են փրկության ճանապարհը»:

18 Եվ շատ օրեր այս բանն անում էր. Պողոսն էլ
զայրացած դարձավ և ասաց այն ոգուն. «Հիսուս
Քրիստոսի անունով պատվիրում եմ քեզ, դուրս եկ
դրանից»: Եվ նույն ժամում դուրս եկավ:

Հոգիների զանազանության շնորհիվ Պողոսը գիտեր, որ այդ երիտասարդ կինը, որ իրենց խմբին հետևում էր Փիլիպիայի փողոցներում, հարցուկ ոգի ուներ: Երբ գործեց հոգիների զանազանության պարգևը, նա շրջվեց դեպի այդ կինը և իր խոսքն ուղղեց հենց այդ ոգուն՝ հրամայելով, որ դուրս գա նրանից: Ուշադրություն դարձրեք այն բանին, որ Պողոսը լուծեց ոչ թե մարդու, այլ ոգու հարցերը (ազատագրումից հետո աղջիկը այլևս չէր կարող բախտագուշակությամբ զբաղվել. հարցուկ ոգին հեռացել էր նրանից):

Այն իրականությունում, որում մենք ապրում ենք, գերբնական դրսևորումները երկու աղբյուրից են ծագում՝ Աստծուց կամ սատանայից: *Շատ բաներ, որոնք մեզ հրաշագործություն են թվում, իրականում Աստծուց չեն գալիս:* Չպետք է մոռանանք, որ սատանան ևս գերբնական արարած է: Շատ հաճախ մարդիկ պատրաստ են հետևելու ցանկացած բանի՝ անկախ նրանից, թե արդյոք դրա հիմքում Աստծո Խոսքն է:

Երբ գործում է հոգիների զանազանությունը, մենք կարող ենք հստակ ճանաչել Աստծո Հոգու ճշմարիտ դրսևորումը: Այս պարգևի շնորհիվ կարող ենք հասկանալ, թե որոշակի գործողության հետևում ինչ հոգի է կանգնած:

Մյուս կողմից կարող ենք ճշգրտորեն նույնականացնել դրսևորման աղբյուրը՝ նույնիսկ առանց հոգիների զանազանության պարգևն ունենալու: Ինչպե՞ս է սա հնարավոր: Եթե մենք գիտենք Աստծո Խոսքը և Հոգով ենք վարվում, ապա կունենանք ներքին վկայություն, որը կառաջնորդի մեզ և կօգնի տարբերակելու ճշմարիտը կեղծից:

Հռոմեացիս 8.14-ում ասվում է. *«Որովհետև որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են»*: Այս խոսքը նշանակում է, որ Աստծո բոլոր որդիները կարող են առաջնորդվել Հոգով: Սակայն Սուրբ գիրքը վստահաբար չի ասում, որ Աստծո *բոլոր* զավակները կունենան հոգիների զանազանության պարգևը: Ա Կորնթացիս 12.8-10-րդ խոսքերում ասվում է. *«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք... ուրիշին՝ հոգիների ընտրություն...»*: Այստեղ չի նշվում և նույնիսկ չի էլ ենթադրվում, որ բոլորը կունենան այս պարգևները, սակայն ամեն հավատացյալ կարող է առաջնորդվել Հոգով: Մենք պետք է հասկանանք այդ երկուսի տարբերությունը. որոշ բաներ հայտնի են դառնում մեզ ներքին վկայությամբ, իսկ որոշ բաներ՝ հոգիների զանազանությամբ:

«Զանազանություն» և ոչ թե մտքեր կարդալ

Ինչ-որ մեկն ասել է՝ լավագույն եղանակը՝ պարզելու, թե այսինչ բանն ինչ է, պարզելն է, թե դա ինչ *չէ:* Ուստի եկե՛ք տեսնենք, թե ինչ չէ հոգիների զանազանությունը:

Նախ և առաջ հոգիների զանազանությունը «խորաթափանցություն» չէ: Մարդիկ ասում են՝ «Ես *խորաթափանցության* պարգև ունեմ»: Աստվածաշնչում նման պարգևի մասին ոչինչ չի ասվում: Այս պարգևը կոչվում է *հոգինե-*

ոի զանազանության պարգև: Շատ անգամներ այն, ինչը մարդիկ կոչում են «խորաթափանցության պարգև», իրականում գիտության խոսքի պարգևն է գործողության մեջ: Մարդիկ Աստծո Հոգուց ինչ-որ բաներ են *իմանում* և սխալմամբ կոչում դա «խորաթափանցություն»:

Հոգիների զանազանությունը հոգևորապես «մտքեր կարդալը» չէ, ոչ էլ հոգեբանական ներըմբռնում է, մտավոր սրաթափանցություն կամ ուրիշների սխալները տեսնելու կարողություն. վերջինը մանրախնդրություն է, որը, ինչպես նկատել եմ, առկա է ոչ միայն հավատացյալների, այլև անհավատների շրջանում: Այդ «պարգևը» ստանալու համար նույնիսկ չպետք է դարձի գալ: Ավելին՝ այդ «պարգևն» արգելված է Սուրբ գրքում. *«Մի՛ դատեք, որ չդատվեք»* (Մատթ. 7.1):

Սուրբ Հոգով մկրտության նպատակներից մեկը այդ քննադատական վերաբերմունքի վերջը տալն է և դա հեզ համբերատարության քաղցր վերաբերմունքով փոխարինելը: Հոգիների զանազանության պարգևը մանրախնդրության պարգև չէ: Նրանք, ովքեր կարծում են, թե դրանք նույնն են, այլևս երբեք չեն օգտագործի այդ պարգևը, եթե մի քանի րոպեով իրենք իրենց վրա կիրառեն այն: Հոգիների զանազանության պարգևը *բնավորությունը* կամ *սխալները* հայտնաբերելու պարգև չէ: Այն *հոգիների* զանազանություն է:

Քրիստոնյան պետք է քայլի սիրո մեջ, քանի որ սերը ծածկում է մեղքերի շատությունը: Պողոսն ասել է. *«Եվ իրար հետ քա՛ղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց»* (Եփես. 4.32):

Աստվածաշնչի հայտնի ուսուցիչ Հովարդ Քարթերը իր «Հարցեր և պատասխաններ հոգևոր պարգևների

մասին» գրքում գրել է. «Գիտության խոսքը հայտնություն է տալիս այն բաների մասին, որոնք գոյություն ունեն կամ գոյություն են ունեցել, ուստի այս պարգևով կարող է հայտնի դառնալ այն, որ ինչ-որ ոգի տիրացել է ինչ-որ մեկի մարմնին, սակայն նա, ում այս տեղեկությունը հայտնի է դառնում գիտության պարգևի միջոցով, տեսիլքով չի տեսնում այդ ոգուն, այսինքն՝ չի «զանազանում» այն: Հոգիների զանազանության դեպքում մենք, լինելով բնական արարածներ, տեսնում ենք այն հարթությունից այն կողմ, որում ստեղծվել ենք: Միայն Սուրբ Հոգու հայտնությամբ է, որ կարող ենք ընկալել այն արարածներին, որոնք ապրում են հոգևոր աշխարհում»:

Անգիր.

«Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգտի համար»:
– Ա Կորնթ. 12.7

Հավատքի պարգևը (մաս 1)

Հատվածներ Աստվածաշնչից՝ Եփեսացիս 2.8, Հռոմեացիս 12.3, Գաղատացիս 5.22, 23, Ա Կորնթ. 12.9

Առանցքային ճշմարտություն. Նրանք, ովքեր ունեն հավատքի պարգևը, հավատում են Աստծուն այնպես, որ Նա պատվում է նրանց խոսքը, ինչպես Իրենը, և հրաշագործ կերպով իրականություն է դարձնում այն:

Նախորդ դասերում քննարկեցինք հայտնության երեք պարգևները՝ իմաստության խոսքը, գիտության խոսքը և հոգիների զանազանությունը, իսկ այժմ կանդրադառնանք զորության երեք պարգևներին:

Զորության պարգևները, այսինքն՝ այն պարգևները, որոնք ինչ-որ բան են *անում*, հետևյալն են՝ *հավատքի պարգև, հրաշագործություններ* և *բժշկությունների պարգևներ*: Այս դասի շրջանակում կքննարկենք սրանցից առաջինը՝ հավատքի պարգևը կամ հատուկ հավատքը (ընթերցեք Ա Կորնթացիս 12.4-12):

Թույլ տվեք շեշտադրել, որ հավատքի պարգևը, ինչպես Հոգու մյուս բոլոր պարգևները, գերբնական է. այն

բնական չէ: Ոմանք ասում են, թե Հոգու որոշ պարգևներ բնական են, մյուսները՝ գերբնական: Սակայն եթե *մեկը* գերբնական է, ապա *բոլորն* են գերբնական: Ես հավատում եմ, որ բոլոր պարգևները Սուրբ Հոգու գերբնական դրսևորումներ են (տե՛ս Ա Կորնթացիս 12.11):

Զորության պարգևներից ամենամեծը *հավատքի պարգևն* է: Սա հավատացյալին տրված Հոգու պարգև է, որպեսզի նա հրաշքներ *ստանա*: Իսկ *հրաշագործությունը* հավատացյալին տրված Հոգու պարգև է, որպեսզի նա հրաշքներ *գործի*: Մի պարգևը *ստանում է*, մյուսը *անում է*: Մի պարգևը պասիվ է՝ ստանում է: Մյուս պարգևը ակտիվ է՝ գործում է: Նկատի՛ առեք այն, որ Խոսքն ասում է. *«Ուրիշին՝ զորությունների ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ...»* (Ա Կորնթ. 12.10): «Հրաշագործության» դեպքում դուք հրաշք եք *գործում:* Հրաշք *ստանալիս* դուք այն չեք «գործում». այդտեղ հավատքի պարգևն է գործում:

Մենք պետք է հիշենք նաև, որ *զորությունների պարգևները* սերտ փոխկապակցված են միմյանց, այնպես, ինչպես *հայտնության պարգևները* և *խոսքի պարգևները* (մարգարեություն, այլևայլ լեզուներ և լեզուների մեկնություն): Իրականում Ա Կորնթացիս 14.5-ում Աստվածաշունչը պարզ ասում է, որ լեզուների մեկնությունը հավասարազոր է մարգարեությանը: Մենք տարբերակում ենք պարգևները և առանձին-առանձին թվարկում դրանք, որպեսզի կարողանանք ավելի լավ սահմանել:

Ավելին՝ տեսնում ենք, որ հավատքը, ինչպես նաև աղոթքը, երբեմն շփոթմունք է առաջացնում մարդկանց մտքերում: Մենք հակված ենք հավատքի բոլոր տեսակ-

ները նույն պարկի մեջ տեղավորելու, իրար խառնելու և թափ տալու դրանք, մինչդեռ պետք է տարբերակել:

Այսպես՝ գիտենք, որ կա հավատքի չորս տեսակ.

1. *Փրկող հավատք,* որը տանում է փրկության:
2. *Ընդհանուր հավատք,* որն ունի ամեն հավատացյալ:
3. *Հավատքի պտուղ* կամ հավատարմություն՝ վերստեղծված մարդկային հոգու պտուղ, որը ձևավորվում է փրկությունից հետո:
4. *Հավատքի պարգև* կամ հատուկ հավատք՝ Սուրբ Հոգու գերբնական դրսևորում, որը տրվում է մարդուն Սուրբ Հոգով մկրտվելուց հետո, ինչպես Հոգին կամենում է:

Ինչպես ասում են, լավագույն եղանակը՝ պարզելու, թե այսինչ բանն ինչ է, պարզելն է, թե դա ինչ *չէ:*

Փրկող հավատք

ԵՓԵՍԱՑԻՍ 2.8

8 Որովհետև շնորհքով եք փրկված հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է:

Այն հավատքը, որով փրկվում ենք, Աստծո պարգևն է: Այն մեզ տրվում է Խոսքի միջոցով. «*Ուրեմն հավատքը* [փրկող հավատքը] *լսելուց է, և լսելը՝ Աստծո խոսքից»* (Հռոմ. 10.17): Եվ սակայն հավատքի այն տեսակը, որը քննարկելու ենք այս դասի շրջանակում, հավատքի պարգևն է կամ հատուկ հավատքը. այն նույնը չէ, ինչ փրկող հավատքը:

Ընդհանուր հավատք

ՀՌՈՄԵԱՑԻՍ 12.3

3 …Աստված ամեն մեկին հավատքի չափը բաժանեց:

Կա հավատքի մի տեսակ (ես այն կոչում եմ ընդհանուր հավատք), որ բոլոր հավատացյալներն ունեն: Այս ընդհանուր հավատքը կարող է աճել, երբ քրիստոնյաները սնվում են Աստծո Խոսքով և գործադրում այն կյանքի ասպարեզում: Բոլորս կարող ենք ունենալ անընդհատ աճող այս ընդհանուր հավատքը: Իսկ ինչ վերաբերում է *հավատքի պարգևին*, այն Հոգու ինը պարգևներից մեկն է, որը տրվում է ըստ Սուրբ Հոգու կամքի:

Շարունակելով ասենք, որ ընդհանուր հավատքը այն հավատքն է, որով սովորաբար ստանում ենք մեր աղոթքների պատասխանները: Օրինակ՝ Սուրբ Հոգով մկրտությունը ստանում ենք հավատքով, քանի որ Հիսուսն ասել է. *«Սրա համար ասում եմ ձեզ, թե՝ ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք, թե ԿԱՌՆԵՔ, և ԿԼԻՆԻ ձեզ»* (Մարկ. 11.24):

Մեզնից շատերը աղոթքի պատասխաններ ստանում են հավատքով՝ ընդհանուր հավատքով, նույնիսկ նախքան Սուրբ Հոգու մկրտություն ստանալը: Աղոթքի նման պատասխանները ստանում ենք, քանի որ *հավատքով* մոտենում ենք Աստծուն, սակայն սա նույնը չէ, ինչ *հավատքի պարգևը*՝ գործողության մեջ:

Իրականում, եթե հավատքի պարգևն անհրաժեշտ լիներ աղոթքի պատասխան, մարմնի բժշկություն, ֆինանսական կարիքի լրացում ստանալու համար, ապա չէինք կարողանա որևէ աղոթքի պատասխան ստանալ նախ-

քան Սուրբ Հոգով մկրտվելը, քանի որ այդ ժամանակ է, երբ ստանում ենք հատուկ հավատքի պարգևը, այն էլ եթե Հոգին է կամենում:

Այդուհանդերձ, գիտենք, որ մեզնից շատերը աղոթքի պատասխաններ ստացել են *հավատքով՝* ընդհանուր հավատքով, նախքան Սուրբ Հոգու մկրտությունը ստանալը: Օրինակ՝ մեզնից շատերը բժշկվել են Աստծո Խոսքի նկատմամբ ունեցած հավատքի հիման վրա *նախքան* Սուրբ Հոգու մկրտություն ստանալը: Մենք գործի ենք դնում ընդհանուր հավատքը՝ աղոթքի պատասխաններ ստանալու համար:

Նույն տրամաբանությամբ առաջնորդվելով՝ եթե հավատքի պարգև՝ հատուկ հավատք է անհրաժեշտ աղոթքի պատասխաններ ստանալու համար, ապա ոչ բոլորը, նույնիսկ ոչ բոլոր Հոգով լցվածները, կարող են համոզված լինել, որ իրենց աղոթքները կպատասխանվեն: Ինչո՞ւ. որովհետև Հոգով լցված ամեն հավատացյալի չէ, որ խոստացված է հատուկ հավատքի պարգևը: Սուրբ գիրքն ասում է. *«Որովհետև ՄԵԿԻՆ գրված է... գիտության խոսք... ՄՅՈՒՍԻՆ՝ ՀԱՎԱՏՔ՝ նույն Հոգով...»* (Ա Կորնթ. 12.8, 9):

Ինչ վերաբերում է հավատքի պարգևին, Պողոսը ամփոփում է իր խոսքը գլխի վերջում. *«...Մի՞թե ԱՄԵՆԸ զորություններ* անող *են»* (խ. 29): Ո՛չ: *«Մի՞թե ԱՄԵՆԸ բժշկությունների պարգևներ ունեն»* (խ. 30): Պատասխանն է՝ ո՛չ:

Ուստի տեսնում ենք, որ հավատքի պարգևը նույնը չէ, ինչ ընդհանուր հավատքը, որն ամեն հավատացյալ ունի, քանի որ եթե մենք հիմնվենք հավատքի պարգևի վրա՝ աղոթքի պատասխաններ ստանալու համար, ապա ոչ բոլորը կկարողանան աղոթքի պատասխաններ ստանալ:

Հավատքի պտուղը

ԳԱՂԱՏԱՑԻՍ 5.22, 23

22 Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն,

23 քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն. այնպիսիների դեմ օրենք չկա:

Հավատքի պտուղը տարբերվում է հավատքի պարգևից: Գաղատացիս 5.22, 23-ում գրված վերոնշյալ խոսքերում կարդում ենք Հոգու պտղի մասին (այդ թվում՝ հավատքը): Հունարեն բնագրում հավատքի պտուղը չի կոչվում հավատք, այլ «հավատարմություն»:

Հոգու *պտուղը* քրիստոնյայի բնավորության զարգացման համար է, Հոգու *պարգևները* հավատացյալի կյանքում զորություն բերելու համար են:

Պտուղն աճում է: Հավատքը կամ հավատարմությունը պտուղ է, որն *աճում է* քրիստոնյայի կյանքում՝ նրա մեջ հոգևոր բնավորություն կերտելու նպատակով: Իսկ հատուկ հավատքի պարգևը Աստծո Հոգուց տրված *նվեր* է, որը Նա բաժանում է, ինչպես Ինքն է կամենում:

Ինչ վերաբերում է հավատքի պարգևին, Ուեյմաութի թարգմանությունում գրված է. *«...մյուսին՝ հավատք՝ նույն Հոգով»* (Ա Կորնթ. 12.9):

Լսել եմ, թե ինչպես են ոմանք ասում. «Դե, եթե Աստված ինձ *հավատք* տա, ապա ես այն կունենամ, իսկ եթե չտա, չեմ ունենա»: Կարդացել են *«...մյուսին՝ հավատք* [է տրվում]...» խոսքերը և կարծել են, թե սա է «հավատք» ստանալու ճանապարհը: Սակայն այս խոսքում խոսվում է հավատքի պարգևի կամ հատուկ հավատքի մասին:

Հավատքի պարգևը

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 12.9

9 ՄՅՈՒՍԻՆ՝ հավատք՝ նույն Հոգով...

Այսպիսով՝ տեսնում ենք, որ հավատքի պարգևը բոլորին չէ, որ տրվում է, այլ բաժանվում է այնպես, ինչպես Հոգին է կամենում: Բացի այդ՝ հրաշք ստանալը Սուրբ Հոգու գերբնական դրսևորում է: Հավատքի պարգև ունեցողը հրաշք չի գործում, այլ պասիվորեն ստանում է հրաշքը:

Հավատքի պարգևը տարբերվում է հավատքի մյուս տեսակներից նրանով, որ այս հատուկ հավատքի միջոցով դրսևորվում է գերբնականը: Մարդը կարողանում է, հակառակ բոլոր հակադրվող հանգամանքներին, գերբնականորեն հավատալ Աստծուն հրաշքի համար:

Զորության երեք պարգևներից (հավատքի պարգև, հրաշագործություններ և բժշկությունների պարգևներ) ամենամեծը հավատքի պարգևն է:

Հասկացանք նաև, որ հավատքի պարգևը առանձին է և տարբերվում է փրկող հավատքից, որը փրկության է տանում, ընդհանուր հավատքից, որն ամեն հավատացյալ ունի, և հավատքի պտղից, որը ձևավորում է քրիստոնյայի բնավորությունը:

Հաջորդ գլխում կտեսնենք, որ հավատքի պարգևով մարդուն Աստծուց հրաշք ստանալու գերբնական կարողություն է տրվում՝ լինի գերբնական պաշտպանություն, գերբնական մատակարարում, անմաքուր ոգիներից ազատագրում, մեռելների հարություն թե գերբնական դրսևորումների փոխանցում, ինչպես, օրինակ՝ Սուրբ Հո-

գով մկրտության նպատակով ձեռք դնելը կամ օրհնություններ հռչակելը:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք...
մյուսին՝ հավատք՝ նույն Հոգով...»:
– Ա Կորնթ. 12.8, 9

Հավատքի պարգևը (մաս 2)

Հատվածներ Աստվածաշնչից՝
Դանիել 6.16, 17, 19-23, Գ Թագավորաց 17.2-6,
Գաղատացիս 3.5

Առանցքային ճշմարտություն. Հավատքի պարգևը Սուրբ Հոգուց տրված գերբնական նվեր է, որով այն, ինչը մարդն ասում կամ ցանկանում է, կամ այն, ինչ Աստված է ասել, իրականություն է դառնում:

Հավատքի պարգևը նույնը չէ, ինչ հրաշագործությունների պարգևը, թեև նշված երկու պարգևների դեպքում էլ արդյունքը հրաշքներն են: Հրաշագործությունների պարգևը *ակտիվ* է, իսկ հավատքի պարգևը՝ *պասիվ*, այն չի գործում, այլ ստանում է: Այլ կերպ ասած՝ հրաշագործությունների պարգևի և հավատքի պարգևի տարբերությունն այն է, որ մեկը *անում է*, մյուսը *ստանում է*:

Երբ գործում է հավատքի պարգևը, իրականանում է այն, ինչ ասում կամ ցանկանում է այդ պարգևն ունեցող անձը: Կատարվում է այն, ինչ հռչակվել է հավատքի այս պարգևով՝ լինի Աստծո թե մարդու ասած խոսք, հրաշք,

հաստատություն, *անեծք* թե օրհնություն, արարում թե ոչնչացում, հեռացում թե փոփոխում:

Հրաշագործությունները գործողություն են ենթադրում, իսկ հավատքի պարգևը՝ գործընթաց: Հրաշագործությունների պարգևի միջոցով հրաշքներ են *գործվում,* իսկ հավատքի պարգևի միջոցով հրաշքներ են *ստացվում*: Սրա պատճառն այն է, որ հրաշագործությունների պարգևն օգտագործում է հավատք, որն ակտիվորեն հրաշք է *գործում*, իսկ հավատքի պարգևն օգտագործում է հավատք, որը պասիվորեն *սպասում* է հրաշքի՝ երկարատև կամ շարունակական հրաշքի: Բացի այդ՝ երբ գործում է հավատքի պարգևը, միշտ չէ, որ միանգամից է տեղի ունենում այն հրաշքը, որին հավատում են. հնարավոր է՝ այն իրականանա երկար ժամանակի ընթացքում:

Հավատքի պարգևը գերբնական օրհնությունների համար

Հավատքի պարգևը հնում գործածել են նահապետները անմիջական գերբնական օրհնությունների կամ մարդկանց ասած խոսքերի իրագործման համար: Մահանալիս նրանք ձեռք էին դնում իրենց որդիների վրա և օրհնություններ էին հռչակում նրանց վրա: Հաճախ այդ օրհնություններն իրականանում էին միայն տարիներ անց: Սա տեսնում ենք Աբրահամի, Իսահակի և Հովսեփի կյանքերում: Այս նահապետները հավատում էին, որ իրենց հռչակումներն իրականանալու էին ապագայում նախասահմանված ժամանակին: Այստեղ գործում էր հավատքի պարգևը:

Հավատքի պարգևն անձնական պաշտպանության համար

ԴԱՆԻԵԼ 6.16, 17, 19-23

16 Այն ժամանակ թագավորն ասաց, և բերեցին Դանիելին և նրան գցեցին առյուծների գուբը: Թագավորը պատասխանեց և ասաց Դանիելին. «Քո Աստվածը, որին դու պաշտում ես անդադար, Նա ազատի քեզ»:

17 Եվ մի քար բերեցին և դրեցին գուբի բերանին: Եվ թագավորը կնքեց իր կնիքով և իր մեծամեծների կնիքով, որ Դանիելի նկատմամբ մի բան չփոխվի:

19 Այն ժամանակ թագավորը արշալույսին վեր կացավ կանուխ և շտապելով գնաց առյուծների գուբը:

20 Եվ երբ գուբին մոտեցավ, Դանիելին կանչեց տրտում ձայնով: Թագավորը խոսեց և ասաց Դանիելին. «Ո՛վ Դանիել՝ կենդանի Աստծո ծառա, քո Աստվածը, որին դու պաշտում ես անդադար, կարողացա՞վ քեզ ազատել առյուծներից:

21 Այն ժամանակ Դանիելը խոսեց թագավորի հետ. «Ո՛վ թագավոր, հավիտյան ո՛ղջ կաց:

22 Իմ Աստվածը ուղարկեց Իր հրեշտակը, և նա փակեց առյուծների բերանը, և նրանք ինձ չվնասեցին, որովհետև նրա առաջ մաքրություն գտնվեց ինձ վրա և քո առաջ էլ, ո՛վ թագավոր, մի հանցանք չեմ արել»:

23 Այն ժամանակ թագավորը շատ ուրախացավ իրենում և հրամայեց, որ Դանիելին դուրս հանեն գուբից: Եվ Դանիելը դուրս բերվեց գուբից, և նրա վրա ոչ մի վնաս չգտնվեց, որովհետև հավատացել էր իր Աստծուն:

Դանիելը հրաշք ստացավ առյուծների գուբում: Այդ օրերին և պատմության ողջ ընթացքում շատերն են գցվել առյուծների գուբը և սպանվել: Ինչո՞ւ առյուծները չվնասեցին Դանիելին:

Աստվածաշունչն ասում է, որ Դանիելը «հավատացել էր իր Աստծուն»: Կասկած չկա, որ Աստված Դանիելին այդտեղից փրկություն *սպանալու* հատուկ հավատք էր տվել՝ հատուկ պարգև: Դանիելը ոչինչ *չարեց*. պարզապես պառկեց և քնեց: Նկատի առեք այն, որ Դանիելի հավատքը պասիվ էր և ոչ թե ակտիվ, սակայն նա հրաշք ստացավ: Այստեղ գործեց հավատքի պարգևը:

Նույն կերպ Հիսուսը գործի դրեց հավատքի պարգևը, երբ մեծ վտանգի առաջ էր կանգնած: Ահարկու փոթորկի ժամանակ Հիսուսը գլուխը բարձին դրած քնած էր նավի ետնամասում: Այստեղ գործում էր հավատքի պարգևը, որը պարզապես հրաշքի էր սպասում:

Գուցե վիճեք՝ ասելով. «Այո՛, բայց դա Հիսուսն էր: Նա Աստծո Որդի է»:

Այդուհանդերձ, մենք գիտենք, որ Հիսուսը երբեք ոչինչ չի արել առանց Սուրբ Հոգու զորության: Նա զրկել էր Իրեն այն զորությունից, որն ուներ որպես Աստծո Որդի:

Սուրբ Հոգին եկել էր Հիսուսի վրա և օծել Նրան այն ժամանակ, երբ Հովհաննեսը մկրտել էր Նրան Հորդանան գետում: Մինչև մկրտվելը Հիսուսը նույնքան Աստծո Որդի էր, որքան մկրտվելուց հետո: Սակայն Աստվածաշունչն ասում է, որ մինչև մկրտությունը Նա հրաշքներ չի գործել (Հովհ. 2.11): Իսկ դրանից հետո Հիսուսը ծառայել է այնպես, ինչպես Սուրբ Հոգով օծված ցանկացած մարդ:

Եթե Հիսուսը՝ որպես Աստծո Որդի, Իրեն ԲՆՈՐՈՇ, Իր ներսում եղող զորությամբ գործեր, ապա չէր կարող մեզ ասել, որ անեինք այն գործերը, որ Ինքն է արել: Մինչդեռ Նա պարզ ասել է. *«...ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Ինձ հավատացողը այն գործերը, որ Ես գործում եմ,*

նա էլ կգործի...» (Հովհ.14.12): Սակայն եթե Հիսուսն այդ գործերն արել է որպես Սուրբ Հոգով օծված մարդ, ապա հավատացյալները ևս նույնը կարող են անել:

Մինչ ծովի վրա մոլեգնում էր փոթորիկը, Հիսուսը քնած էր: Նրան չէր անհանգստացնում փոթորիկը: Մինչ սոված առյուծները շրջում էին Դանիելի շուրջը, նա պառկեց ու քնեց՝ վտանգին դեմ հանդիման: Ամբողջ Աստվածաշնչում տեսնում ենք դեպքեր, երբ վտանգի առջև կանգնած որոշ անձանց համար գործել է հավատքի պարգևը: Նրանք գերբնական հանգստություն են ունեցել և այդ գերբնական հավատքով հրաշք ստացել:

Հավատքի պարգևը գերբնական մատակարարման համար

Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 17.2-6

2 Եվ Տիրոջ խոսքը եղավ նրան՝ ասելով.

3 «Գնա՛ այստեղից և դարձի՛ր դեպի արևելք և թա՛ք կաց Քերիթ հեղեղատի մոտ, որ Հորդանանի դեմ է»:

4 Եվ այն հեղեղատից կխմես, և ես ագռավներին հրամայել եմ, որ քեզ կերակրեն այնտեղ»:

5 Եվ նա գնաց և արեց Տիրոջ խոսքի համեմատ և գնաց ու բնակվեց Քերիթ հեղեղատի մոտ, որ Հորդանանի դիմաց է:

6 Եվ ագռավները նրա համար հաց և միս էին բերում առավոտը և հաց ու միս՝ իրիկունը, և նա խմում էր հեղեղատից:

Այստեղ տեսնում ենք օրինակ, թե ինչպես էր հավատքի պարգևը գործում սովի ժամանակ՝ գերբնական

մատակարարման համար. Եղիայի հավատքը գերբնական էր և տրված էր Աստծուց, քանի որ մարդկային տրամաբանությունից վեր էր սպասելը, որ ագռավները կերակրեին մարդուն: Այդուհանդերձ, ագռավներն առավոտյան և երեկոյան սնունդ էին բերում Եղիային: Եվ այդ գերբնական հավատքով Եղիան հրաշք էր ստանում:

Հավատքի պարգևը մեռելների հարության համար

Ինչպես արդեն նշել ենք, Հոգու պարգևները հաճախ միասին են գործում: Մեռելների հարության դեպքում միասին են գործում երեք պարգևներ՝ հավատքի պարգևը, հրաշագործությունները և բժշկությունների պարգևները: Սա է պատճառը, թե ինչու մեռելներից հարության շատ դեպքեր չենք տեսնում: Որոշ քրիստոնյաներ կարող են ունենալ այս պարգևներից մեկը կամ երկուսը, սակայն շատ չեն նրանք, որոնց միջոցով գործում են *բոլորը*:

Նախ և առաջ մահացածին հարություն տալու համար գերբնական հավատք՝ հավատքի պարգև է անհրաժեշտ, որ տվյալ մարդու հոգին, որը լքել է մարմինը, հետ կանչեք: Մարդուն հարություն տալու համար անհրաժեշտ են նաև հրաշագործությունները և բժշկությունների պարգևները, քանի որ եթե մարդը բժշկված չլինի, ապա անմիջապես նորից կմահանա: Հետևաբար, *երբ մարդը հարություն է առնում, գործում են զորության բոլոր երեք պարգևները:*

Ըստ Ալբերտ Հիբերտի՝ Սմիթ Վիգլսվորթի ծառայության ընթացքում տասնչորս մահացած մարդ է հարություն առել:

Առաջին դեպքը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Վիգլսվորթը դեռևս աշխատում էր որպես ջրմուղագործ: Այդ ժամանակ նա նոր էր մկրտվել Սուրբ Հոգով և դեռ չէր անցել ակտիվ ծառայության:

Մի երեկո նրան կանչում են մի երիտասարդ կնոջ տուն, որը մահվան շեմին էր թոքախտի պատճառով: Վիգլսվորթը գիշերը ժամը մեկին սկսում է աղոթել նրա համար, իսկ երեքն անց կեսին կինը մահանում է:

«Այդ ժամանակ ինձ համար «ոչ» բառը գոյություն չուներ, եթե Աստված էր ասում «այո», և Նա արեց դա»,- հիշում է Վիգլսվորթը: Այն սենյակի պատուհանին, որտեղ նա աղոթում էր, հայտնվում է Հիսուսի դեմքը: Աղջկա երեսի գույնը վերադառնում է, նա շրջվում է, քնում և արթնանում է լիովին առողջ:

Մեկ այլ դեպք տեղի է ունեցել Վիգլսվորթի հարևանի հետ, որը մահացել էր Վիգլսվորթի՝ տուն մտնելուց անմիջապես առաջ: Տիկին Վիգլսվորթն արդեն այնտեղ էր: Երբ Վիգլսվորթը սկսում է աղոթել մահացած մարդու համար, տիկին Վիգլսվորթը թափահարում է գլուխն ու ասում. «Մի՛ արա: Չե՞ս տեսնում, որ մահացած է»: Սակայն Վիգլսվորթը շարունակում է աղոթել:

«Իմ հավատքով պայքարեցի այնքան, որքան կարող էի,- պատմում է Վիգլսվորթը,- իսկ հետո Աստված պարուրեց ինձ: Նա դա այնպես արեց, որ ցանկացած բանի կարող էի հավատալ: Երբ Տեր Հիսուսը պարուրեց ինձ, հաստատուն խաղաղություն իջավ սրտիս վրա»: Եվ այդ մարդը հարություն է առնում:

Երրորդ դեպքը, որի մասին պատմել է Վիգլսվորթը, տեղի է ունեցել մի կնոջ հետ, որը մահացել է անմիջապես այն բանից հետո, երբ Վիգլսվորթը և մեկ այլ մարդ նրա համար աղոթել են: «Գուցե մտածեք, թե արածս անհեթեթություն էր,- պատմում է Վիգլսվորթը,- սակայն ես նրան անկողնուց հանեցի, սենյակով մեկ անցկացրի, պատի մոտ կանգնեցրի և այդպես պահեցի»:

Այնուհետև Վիգլսվորթը հրամայել է դիակին՝ ասելով. «Հիսուսի անունով արգելում եմ մահը»: Կնոջ մարմինը սկսել է դողալ: «Հիսուսի անունով հրամայում եմ, որ

քայլես»,- ասել է նա, ու կինը սկսել է քայլել: Այդպես նա կյանքի է վերադարձել:

Սա վեր է սովորական հավատքից: Սովորական հավատքով մենք կարող էինք անկողնուց հանել մահացածի մարմինը, ինչպես Վիգլսվորթն է արել, կագնեցնել այն և հրամայել, որ քայլի: Սակայն չեմ կարծում, թե սովորական հավատքի արդյունքում դիակը կքայլեր: Նման հրաշքի համար Աստծո զորության գերբնական դրսևորումն է անհրաժեշտ:

Շատ անգամներ, երբ մենք հավատքի քայլ ենք անում՝ սովորական հավատքի քայլ, և մեր հավատքը սպառվում է, դրա տեղը զբաղեցնում է *գերբնական* հավատքը: Պատճառը, թե ինչու սա տեղի չի ունենում շատերի հետ, այն է, որ մարդիկ չեն կիրառում այն հավատքը, որն արդեն ունեն:

Հավատքի պարգևը չար ոգիներին դուրս նետելու համար

Երբեմն հավատքի պարգևը կարող է գործել անմաքուր ոգիներին դուրս նետելու մարդկանց մարմիններից, որոնք դրանք ապականում են: Այստեղ ևս պետք է գործեն մեկից ավելի պարգևներ: Նման դեպքերում դրսևորվում է հոգիների զանազանությունը և/կամ գիտության խոսքը, ինչպես նաև հավատքի պարգևը: Եթե մարդը չի զանազանում կամ «տեսնում» հոգին, հաճախ այն բացահայտվում է գիտության խոսքի միջոցով: Սակայն այդ ամենով հանդերձ չար ոգուն դուրս նետելու համար գործում է հավատքի պարգևը: Իհարկե, Մարկոս 16.17-ից գիտենք, որ ընդհանուր հավատքը ևս արդյունավետորեն գործում է չար ոգիներին դուրս նետելու համար:

Հավատքի պարգևը Սուրբ Հոգով մկրտելու համար

ԳԱՂԱՏԱՑԻՍ 3.5

5 Արդ ձեզ Հոգին բաժանողը և ձեր միջում զորություններ գործողը օրենքի գործերի՞ց է, թե՞ հավատքի լսելուց:

Հավատքի պարգևն է գործում, երբ ձեռք ենք դնում մարդկանց վրա, որ նրանք լցվեն Սուրբ Հոգով:

Ցանկացած հավատացյալ կարող է ձեռք դնել մարդկանց վրա *ընդհանուր* հավատքով, յուրացնել Աստծո խոստումները և հավատալ Աստծուն: Սակայն տարբերություն կա ընդհանուր հավատքով Աստծուն հավատալու, Նրա խոստումները յուրացնելու և այն *գերբնական դրսևորման* միջև, որը մեկ անհատից մյուսին է փոխանցվում հատուկ հավատքի պարգևի միջոցով:

Հնարավոր է ընդհանուր հավատքով ձեռք դնել մարդու վրա՝ բժշկության կամ ցանկացած այլ օրհնության համար, և թեև *նկատելի* դրսևորումներ չլինեն, եթե պատասխանը ստացվում է, ապա դա ևս Աստծո զորության դրսևորում է:

Այդուհանդերձ, երբ մի մարդ մյուսի վրա ձեռք է դնում, և *գերբնական դրսևորմամբ* բժշկություն է տեղի ունենում, կամ տվյալ անձը լցվում է Սուրբ Հոգով, ապա այդտեղ գործում է հատուկ հավատքի պարգևը:

Ուստի Աստված երկու կերպով էլ գործում է՝ թե՛ այն ժամանակ, երբ ընդհանուր հավատքով յուրացնում ենք Աստծո խոստումներն ու այդ կերպ ստանում Նրա զորությունը, և թե՛ Աստծո գերբնական դրսևորմամբ՝ մի մարդուց դեպի մյուսը, որի դեպքում գործում է հավատքի պարգևը:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք...
մյուսին՝ հավատք՝ նույն Հոգով...»:
– Ա Կորնթ. 12.8, 9

Հրաշագործությունների պարգևը

Հատվածներ Աստվածաշնչից՝
Դ Թագավորաց 2.9-14, Գ Թագավորաց 17.12-16,
Գործք առաքելոց 5.1-5

Առանցքային ճշմարտություն. Հրաշքը գերբնական միջամտություն է իրերի բնականոն ընթացքին՝ սովորական կարգի ժամանակավոր ընդհատում Աստծո Հոգով:

Ուսումնասիրելով Հոգու պարգևները՝ հասանք *հրաշագործության* պարգևին: Նախ և առաջ եկեք սահմանենք, թե ինչ է «հրաշագործությունը»: Ինչպես շատ բառեր, այնպես էլ «հրաշքը» ընդհանուր առմամբ կարող է նշանակել մեկ բան, իսկ հատուկ կիրառության մեջ՝ մեկ այլ բան:

Երբեմն «հրաշք» բառն օգտագործվում է որպես պատկերավոր խոսք. ասում ենք «հրաշք գործվածք», «հրաշք դեղամիջոց», «հրաշք մաքրող միջոց» և այլն:

Բնության մեջ կարող ենք գեղեցիկ արևածագ տեսնել ու ասել՝ «Սա հրաշք է»: Կարող ենք նայել փառահեղ գույներով ողողված վարդերի գեղեցիկ պարտեզին, որից ծաղիկների անուշ բույրն է բարձրանում երկինք, և ասել,

որ դա բնության «հրաշք» է: Ընդհանուր խոսքում սրանք հրաշք են, սակայն որպես այդպիսին՝ բառի հատուկ կիրառության մեջ՝ ոչ: Ապշեցուցիչ արևածագի ժամանակ արևն անում է ճիշտ այն, ինչ պետք է անի ըստ բնության օրենքների: Վարդը ևս անում է ճիշտ այն, ինչի համար նախատեսված է՝ ըստ բնության օրենքների:

Հոգու պարգևներից յուրաքանչյուրը հրաշափառ է: Դրանք գերբնական են: «Հրաշք» բառի ընդհանուր կիրառության մեջ Հոգու բոլոր պարգևներն էլ հրաշք են: Սակայն եթե որոշակիորեն խոսենք, ապա դա այդպես չէ: Իսկ հրաշագործությունները հատուկ գործողություն են, ինչպես, օրինակ, երբ Եղիսեն թիկնոցը խփելով կիսեց գետը:

Այն բանից հետո, երբ Եղիան պտտահողմի վրա կառքով բարձրացավ երկինք, Եղիսեն ստացավ նրա թիկնոցը և դրանով հարվածեց Հորդանան գետին: Թիկնոցի հարվածով ջրերը բաժանելը հրաշք էր՝ միջամտություն իրերի բնականոն ընթացքին:

Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 2.9-14

9 Եվ եղավ, երբ նրանք անցնում էին, Եղիան ասաց Եղիսեին. «Խնդրիր՝ ինչ անեմ քեզ, քանի որ քեզնից վեր առնված չեմ»: Եվ Եղիսեն ասաց. «Թող քո ոգին կրկնապատիկ լինի ինձ վրա»:

10 Եվ նա ասաց. «Դժվար բան խնդրեցիր: Եթե ես քեզնից վեր առնվելիս դու ինձ տեսար, քեզ կլինի այնպես: Բայց եթե ոչ, չի լինի»:

11 Եվ եղավ, երբ նրանք գնում էին և գնալով խոսում էին, ահա մի հրեղեն կառք և հրեղեն ձիեր, որ նրանց երկուսին բաժանեցին: Եվ Եղիան մրրիկով վեր ելավ երկինքը:

12 Իսկ Եղիսեն մտիկ էր տալիս և կանչում. «Հայ՛ր իմ, հայ՛ր իմ, Իսրայելի կառքը և նրա ձիավորները»: Եվ նրան այլևս չտեսավ և բռնեց նրա հանդերձնե-
ից և պատռեց նրանց, երկու պատառ արեց:

13 Եվ վեր առավ Եղիայի վերարկուն, որ ընկել էր նրա վրայից, և հետ դարձավ ու կանգնեց Հորդա-
նանի ափին:

14 Եվ առավ Եղիայի վերարկուն, որ ընկել էր նրա վրայից, և զարկեց ջրին ու ասաց. «Ո՞ւր է Եղիայի Տեր Աստվածը՝ Նա Ինքը»: Եվ զարկեց ջրին, և ջրերը բաժանվեցին այս կողմը և այն կողմը, և Եղիսեն անց կացավ:

Բժշկությունների ոլորտում հաճախ են հրաշքներ լի-նում, սակայն դրանք հրաշագործությունների արդյունք չեն, այլ բժշկության հրաշքներ են: Ինչ-որ առումով ամեն բան, ինչ Աստված անում է, հրաշափառ է, սակայն ամեն բան չէ, որ այնպիսի հրաշք է, ինչպիսին է խոսքով ջուրը գինի դարձնելը: Վերջինը հրաշագործություն է:

Եթե բնական գործընթացի արդյունքում ջուրը դառնա գինի, դա բնական հրաշք կլինի: Սակայն երբ ջուրը գինի է դառնում խոսքով, ինչը տեղի ունեցավ Հիսուսի պարա-գայում՝ Հովհաննես 2.1-11-ում, ապա այդտեղ գործում է հրաշագործության հոգևոր պարգևը:

Հետևաբար հրաշքը գերբնական միջամտություն է իրերի բնականոն ընթացքին՝ սովորական կարգի ժա-մանակավոր ընդհատում, բնության՝ մեզ հայտնի համա-կարգի խախտում, որը տեղի է ունենում Աստծո Հոգու զորությամբ:

Հրաշագործությունները Հին Կտակարանում

Հրաշագործություններն ավելի հաճախ հանդիպում էին Հին Կտակարանում, քան Նոր Կտակարանում: Իսկ Նոր Կտակարանում առավել գերակա են բժշկությունների պարգևները, չնայած որ Հին Կտակարանում ևս բժշկությունների պարգևները գործում էին, և մարդիկ բժշկվում էին:

Հրաշագործությամբ Աստծո ժողովուրդը հրաշափառ կերպով ազատվեց եգիպտական լծից: Տեսնում ենք, թե ինչպես գործեց այս պարգևը, երբ Աստված համոզեց փարավոնին ազատ արձակել իսրայելացիներին: Այդ ընթացքում մի շարք հրաշքներ տեղի ունեցան:

Հրաշագործություն էր, երբ Ահարոնը ցած գցեց իր գավազանը, և այն վերածվեց օձի (Ելից 7.10): Հրաշագործության պարգևն էր գործում, երբ հողը վերածվեց միջատների (Ելից 8.16), ինչին հետևեցին մյուս պատուհասները:

Եգիպտոսից դուրս գալուց հետո իսրայելացիների առջևում Կարմիր ծովն էր, իսկ հետևում՝ փարավոնն ու նրա զորքը՝ պատրաստ նորից ստրկացնելու նրանց: Մի կողմում սարերն էին, մյուս կողմում՝ անապատը, առջևում՝ ծովը, հետևում՝ թշնամին. նրանց իրավիճակն անհույս էր: Սակայն Մովսեսը նայեց Տիրոջը, և Տերը նրան ասաց, որ մեկնի իր գավազանը: Մովսեսը հնազանդվեց, և ծովը կիսվեց: Սա հրաշագործություն էր՝ աստվածային միջամտություն իրերի բնականոն ընթացքին:

Իրականում այդ իրավիճակում գործում էին Սուրբ Հոգու պարգևներից երկուսը: Հրաշագործությունների պարգևով ծովը կիսվեց, սակայն այն կիսված պահելու համար անհրաժեշտ էր հավատքի պարգևը: Դա շարու-

նակական հրաշք էր: Մարդիկ առանց կոշիկները թրջելու անցան մյուս կողմը: Երբ թշնամին փորձեց նույնն անել, ջրերը միացան, և եգիպտացիները խեղդվեցին:

Հրաշագործության մեկ այլ սուրբգրային օրինակ է կարիքավորներին մատակարարելը:

Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 17.12-16

12 Եվ նա ասաց. «Կենդանի է քո Տեր Աստվածը, որ ես մի նկանակ չունեմ, բացի մի բուռ ալյուր սափորում և մի քիչ յուղ կուժում, և ահա մի երկու փայտ եմ ժողովում, որ գնամ և պատրաստեմ այն ինձ համար և իմ որդու համար, որ այն ուտենք և մեռնենք»:

13 Եվ Եղիան ասաց նրան. «Մի՛ վախեցիր, գնա՛, արա՛ քո խոսքի պես, միայն թե առաջ ինձ համար մի փոքր շո՛թ շինիր նրանից և բե՛ր ինձ համար և հետո քեզ և քո որդու համար կշինես:

14 Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. «Սափորում ալյուրը պիտի չվերջանա, և կուժից յուղը չպակասի, մինչև այն օրը, որ Տերը անձրև տա երկրի երեսին»:

15 Եվ նա գնաց և արեց Եղիայի խոսքի պես, և նա և կինը և իր տունը կերան բավական ժամանակ:

16 Եվ սափորից ալյուրը չէր վերջանում, և կուժից յուղը չէր պակասում Տիրոջ այն խոսքի պես, որ ասաց Եղիայի ձեռքով:

Եղիսեի ծառայության մեջ ևս հրաշագործություն էր այն, որ այրիի յուղի կուժից յուղը հոսեց այնքան, որ լցվեցին նրա ունեցած բոլոր տարաները: Իսկ հետո նա հար-

ևաններից տարաներ վերցրեց և դրանք ևս յուղով լցրեց (տե՛ս Դ Թագ. 4.1-7):

Հրաշագործությունները Նոր Կտակարանում

Հրաշագործություններ ենք տեսնում այն դրվագում, երբ Հիսուսը վերցրեց փոքրիկ տղայի կերակուրը և դրանով կերակրեց հինգ հազար մարդու, իսկ այն բանից հետո, երբ մարդիկ կերան ու կշտացան, մնացորդներից ավելացավ տասներկու կողով կերակուր (Հովհ. 6.6-14):

Հրաշագործությունների միջոցով հաստատվում էր նաև Աստծո քարոզված Խոսքը: Երբ Պողոսը Կիպրոսում քարոզում էր, Եղիմաս մոգը հակառակվում էր նրան: Պողոսն Աստծո զորությամբ գործող հրաշագործությունների պարգևով որոշ ժամանակով կուրացրեց նրան, և դա նշան եղավ մյուսների համար (Գործք 13.4-12):

Այս պարգևն օգտագործվում էր նաև մարդկանց անխուսափելի վտանգից փրկելու համար: Հավատքի պարգևը մարդուն անվնաս կանցկացնի վտանգի միջով, սակայն հրաշագործության պարգևն այլ է. դրա միջոցով փոխվում են վտանգ առաջացնող հանգամանքները:

Օրինակ՝ երբ Պողոսը նավակոծության ենթարկվեց, փոթորիկն ինքն իրեն դադարեց (Գործք 27): Պողոսը ոտքի չկանգնեց և չասաց՝ «Փոթորի՛կ, դադարի՛ր»: Քանի որ Աստված խոսել էր նրա հետ, նա գերբնական ձևով հավատում էր աստվածային պաշտպանությանը: Այդտեղ գործում էր հավատքի պարգևը, ինչի շնորհիվ նա ապահովություն ստացավ նաև իր հետ նավում գտնվողների համար, չնայած որ նավը խորտակվեց:

Իսկ երբ Հիսուսն էր նավի մեջ՝ Գալիլեայի ծովի վրա

փոթորկի ժամանակ, Նա ասաց՝ «Լռի՛ր, պապանձվի՛ր» (Մարկ. 4.39), և հրաշք տեղի ունեցավ. փոխվեց վտանգ հարուցող իրավիճակը:

Հավատքի պարգևի և հրաշագործությունների պարգևի տարբերությունն այն է, որ հավատքի պարգևը ՍՏԱՆՈՒՄ է հրաշք, իսկ հրաշագործությունների պարգևը ԳՈՐԾՈՒՄ է հրաշք:

Հրաշագործությունների պարգևը դրսևորում է Աստծո զորությունն ու հրաշափառությունը: Յանգի՝ *«Աստվածաշնչի վերլուծական համաբարբառում» (Analutical Concordance to the Bible)* «հրաշքներ» բառի փոխարեն օգտագործված է հունարեն «զորություններ» բառը: Այլ կերպ ասած՝ «հրաշագործությունները» ձևակերպված է որպես «զորությունների ներգործություն»: Ըստ հունարեն համաբարբառի՝ այդ հունարեն բառը նշանակում է «ամենակարողության ցայտուն դրսևորումներ»: Սա նշանակում է ցնցող կամ ապշեցուցիչ հրաշքներ: Այլ կերպ ասած, այդ բառը կարդալով՝ հույները հետևյալն էին հասկանում՝ «ցնցող հրաշքներ, ապշեցուցիչ բաներ կամ ամենակարողության ցայտուն դրսևորումներ»:

«Հոգևոր պարգևների վերաբերյալ հարցեր և պատասխաններ» կոչվող իր գրքում Հովարդ Քարթերն ասում է՝ «...հրաշագործությունները Հոգու շատ կարևոր դրսևորում են: Դա Աստծո հզոր ուժն է, որը հոսում է մարդու միջով»: Կարող ենք ասել, որ մարդը մասնակցում է Աստծո նույն այն զորությանը, որը դրսևորվել է, երբ Աստված ստեղծել է աշխարհը, քանի որ Խոսքով աշխարհը ստեղծելը վստահաբար հրաշք էր:

Երբ Աստված թույլ է տալիս, որ մարդը Հոգու զորությամբ խոսք խոսի, և գետը կիսվի, նույն Աստված, որ

ստեղծել է այդ ջրերը, թույլ է տալիս, որ ամենակարողության մի փոքր մաս դրսևորվի այդ մարդու մեջ, ինչպես Հոգին է կամենում:

Հրաշագործությունների պարգևն իսկապես հզոր պարգև է, որը փառավորում է «բոլոր զորությունների Աստծուն», ինչպես Հովարդն է գրել՝ այդպիսով խթանելով Իր ժողովրդի հավատքը և ցնցելով ու շփոթեցնելով աշխարհի անհավատությունը:

Անգիր.

«Որովհետև մեկին Հոգուց տրված է զորությունների ներգործություններ...»:
– Ա Կորնթ. 12.8, 10

Բժշկությունների պարգևները

Հատվածներ Աստվածաշնչից՝
Գործք առաքելոց 10.38, Ա Կորնթացիս 12.28-30

Առանցքային ճշմարտություն. Բժշկությունների պարգևների նպատակն է ազատել հիվանդներին և քանդել սատանայի գործերը մարդու մարմնում:

Բժշկությունների պարգևները Աստծո կողմից տրված են հիվանդությունների գերբնական բժշկության համար՝ առանց որևէ բնական միջոցի կիրառության: Հոգու բոլոր ինը պարգևները գերբնական են:

Մյուս պարգևները սահմանելիս գուցե դժվարանանք սահմանափակ իմացության պատճառով, սակայն բժշկությունների պարգևների սահմանումը պետք է որ դժվար չլինի: Գրեթե բոլորն են հասկանում բժշկության թեման: Իհարկե, Հիսուսն Իր ծառայության մեջ ավելի ակնառու դարձրեց բժշկությունը: Բացի այդ՝ Նա Իր աշակերտներին հիվանդներին բժշկելու իշխանություն տվեց (Մատթ. 10.8):

Մենք ցանկանում ենք շեշտադրել Հոգու բոլոր պարգևների, այդ թվում նաև բժշկությունների պարգևների գերբնական բնույթը: Այս պարգևները ոչ մի ընդհանրություն չունեն բժշկագիտության կամ մարդկային ուսուցման հետ:

Ղուկասը՝ սիրելի բժիշկը, Պողոսի հետ է եղել վերջինիս ճամփորդությունների մեծ մասի ժամանակ: Ղուկասն է գրել Գործք առաքելոցը, ինչպես նաև իր անունը կրող Ավետարանը: Նա Պողոսի հետ էր Մելիտե կղզում նավակոծության ժամանակ (Գործք 28): Սակայն ոչինչ չի ասվում այն մասին, որ Ղուկասը ծառայում էր մարդկանց իր *բժշկական* գիտելիքով: Ղուկասը գրում է, որ կղզու առաջնորդի հայրը հիվանդ էր, և երբ Պողոսը ձեռք դրեց նրա վրա, նա գերբնական զորությամբ բժշկվեց: Այդ դեպքից հետո մարդիկ ամբողջ կղզու հիվանդներին բերում էին Պողոսի մոտ, որ վերջինս ծառայեր նրանց, ու նրանք բժշկություն ստանային:

Իհարկե, մենք հավատում ենք բժշկագիտությանը և շնորհակալ ենք Աստծուց դրա տված հնարավորությունների համար: Մենք վստահաբար դեմ չենք բժիշկներին: Բանն այն է, որ ոմանք շփոթում են բժշկագիտությունը բժշկությունների պարգևների հետ: Լսել եմ, թե ինչպես են ասում, որ բժշկությունների պարգևները բժիշկներն են և այն բժշկական գիտելիքը, որն Աստված նրանց տվել է:

Եթե բժշկագիտությունը լիներ բժշկելու Աստծո կերպը, ապա բժիշկները գումար չպետք է վերցնեին. նրանց ծառայությունները անվճար պետք է լինեին: Սակայն բոլորը, ովքեր բժիշկների հետ ինչ-որ առնչություն են ունեցել, գիտեն, որ դա այդպես չէ: Բացի այդ՝ եթե բժշկագիտությունը լիներ բժշկելու Աստծո կերպը, ապա այն անսխալական կլիներ. բժիշկները սխալներ չէին անի:

Մենք շնորհակալ ենք Աստծուց բժշկագիտության համար և այն ամենի համար, ինչ անում են լավ բժիշկները և հիվանդանոցները: Մենք մեր խոսքերով երբեք չէինք նսեմացնի նրանց կամ ժամանակակից բժշկական տեխնոլոգիաների մեծ առաջընթացը: Նաև շնորհակալ ենք Աստծուց այն բազում քրիստոնյա բժիշկների համար, որոնք սրտանց հետաքրքրված են իրենց բուժառուներով և հմտո-

րեն ծառայում են նրանց: Սակայն գերբնական բժշկությունը չի տրվում ախտորոշման կամ նշանակված բուժման արդյունքում. այն տեղի է ունենում ձեռք դնելով, յուղով օծելով կամ երբեմն Խոսքը հռչակելով: Ես հավատում եմ բնական բժշկությանը և շնորհակալ եմ Աստծուց դրա համար, սակայն հավատում եմ նաև գերբնական բժշկությանը:

Հիսուսի բժշկության ծառայությունը

ԳՈՐԾՔ 10.38

38 Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց, որ ման եկավ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով: Որովհետև Աստված նրա հետ էր:

Հիսուսը չէր ծառայում որպես Աստծո Որդի, այլ որպես Սուրբ Հոգով օծված մարգարե: Հիսուսը քսանհինգ տարեկանում նույնքան Աստծո Որդի էր, որքան երեսուն տարեկանում, սակայն քսանհինգ տարեկանում Նա ոչ մեկին չէր բժշկել, և բժշկության ոչ մի հրաշք տեղի չէր ունեցել Նրա ծառայության մեջ: Քսանինը տարեկանում Նա նույնքան Աստծո Որդի էր, որքան երեսուն տարեկանում, սակայն Նրա քսանինը տարիների ընթացքում ոչ ոք չէր բժշկվել. Նա բժշկության ոչ մի հրաշք չէր գործել:

Երբ Հիսուսը երեսուն տարեկան էր, մինչև այն օրը, երբ Հովհաննեսի կողմից Հորդանան գետում ջրով մկրտվեց, և Սուրբ Հոգին իջավ Նրա վրա՝ ծառայության համար, Նա նույնքան Աստծո Որդի էր, որքան դրանից հետո: Սակայն մինչ այդ Նա ոչ մեկին չէր բժշկել. Նրա կյանքում գործող զորության դրսևորում չկար:

Այդ ամենը տեղի ունեցավ միայն այն բանից հետո, երբ Սուրբ Հոգին աղավնու նման իջավ Հիսուսի վրա՝ օծելու Նրան ծառայության համար: Իրականում Հիսուսը

երբեք չի պնդել, որ Ինքն է անում այդ գործերը: Նա ասել է. *«...Բայց Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը» (Հովհ. 14.10)*:

Հիսուսը կանգնեց և Իր հայրենի քաղաքի ժողովարանում կարդաց. *«Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ...»* (Ղուկ. 4.18):

Տարիներ անց Պետրոսը Կոռնելիոսին և նրա ընտանիքին քարոզելիս ասաց. «*Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց...»* (Գործք 10.38):

Թեև Հիսուսը միշտ էլ Աստծո Որդի էր, *մինչև* Սուրբ Հոգով և զորությամբ մկրտվելը ոչ մեկին չբժշկեց:

Սրանից պետք է եզրակացություն անել, որ Նա չէր բժշկում այն զորությամբ, որն Իրեն հատուկ էր որպես Աստծո Որդու՝ Երրորդության երկրորդ Անձի, այլ այնպես, ինչպես այսօր ցանկացած հավատացյալ կարող է ծառայել հիվանդներին՝ Սուրբ Հոգու օծությամբ բժշկությունների պարգևների դրսևորմամբ:

Հոգու ամբողջական չափը Հիսուսի ծառայության մեջ

Աստվածաշնչում գրված է, որ Քրիստոսը Հոգին ուներ առանց չափի: «*...Նա, Որին Աստված ուղարկեց, Աստծո բանն է խոսում: Որովհետև Աստված Հոգին չափով չի տալիս»* (Հովհ. 3.34): Հետևաբար Նրա ծառայության մեջ կարող ենք տեսնել այնպիսի դրսևորումներ, որոնք չենք տեսնի մեկ ուրիշի ծառայության մեջ, քանի որ Նա Հոգին ուներ առանց չափի. ոչ մի այլ անձ չունի դա: Այդուհանդերձ, կարծում եմ, որ այս խոսքերը նշանակում են, որ Քրիստոսի ամբողջ Մարմինը հավաքականորեն ունի Հոգու նույն չափը, ինչ Հիսուսն ուներ: Ուստի անհատը չի

կարող ունենալ նույնքան հաջողություն նույնիսկ բժշկությունների պարգևներով ծառայելիս, որքան Հիսուսը, քանի որ Նա Սուրբ Հոգին ուներ առանց չափի: Հոգին առանց չափի ունենալը նշանակում էր, որ Հիսուսի միջոցով դրսևորվում էին բժշկությունների բոլոր պարգևները:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 12.28-30

28 Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. առաջ՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին, հետո՝ զորություններ, հետո՝ բժշկությունների պարգևներ, օգնություններ, կառավարություններ, այլևայլ լեզուներ:

29 Մի՞թե ամենն առաքյալներ են: Մի՞թե ամենը մարգարեներ են: Մի՞թե ամենը վարդապետներ են: Մի՞թե ամենը զորություններ անող են:

30 Մի՞թե ամենը բժշկությունների պարգևներ ունեն: Մի՞թե ամենը լեզուներ են խոսում: Մի՞թե ամենը թարգմանում են:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ 28-րդ խոսքում թե՛ «պարգև» և թե՛ «բժշկություն» բառերն օգտագործված են հոգնակի թվով: Այսպես պետք է լինի բոլոր խոսքերում, քանի որ այդպես է գրված հունարեն բնագրում:

Նկատի՛ առեք նաև, որ սա միակն է Հոգու պարգևներից, որը գործածված է հոգնակի թվով: Մյուս բոլորը մատնանշում են մեկ եզակի պարգև:

Ինչո՞ւ «բժշկությունների պարգևներ» և ոչ թե «բժշկության պարգև»: Իրականում չգիտեմ, սակայն որոշակի կարծիք ունեմ: Չեմ կարծում, թե մեզնից որևէ մեկը կարող է հաստատ իմանալ պատասխանը, քանի որ

Սուրբ գիրքը ոչ մի հատուկ բան սրա մասին չի ասում: Սակայն կարծում եմ, որ կան բժշկությունների պարգևներ, քանի որ կան տարբեր տեսակի հիվանդություններ, և մեկ պարգևը չէր բժշկի բոլոր այդ հիվանդությունները:

Իմ ծառայության, ինչպես նաև այլոց ծառայությունների մեջ նկատել եմ, որ այնտեղ, որտեղ այս պարգևները գործում են, բժշկությունների մի ոլորտում հաջողությունն ավելի մեծ է լինում, քան մյուսներում: Այլ ծառայողներ ևս ինձ ասել են, որ կան հիվանդությունների որոշ տեսակներ, որոնցից մարդիկ հազվադեպ են բժշկվում իրենց ծառայության ընթացքում, և կան ուրիշները, որոնցից գրեթե միշտ բժշկվում են: Ինչո՞ւ. չգիտեմ: Գուցե ժամանակի ընթացքում սրա մասին ավելի շատ բան իմանանք, քանզի այստեղ ենք՝ ուսումնասիրելու և սովորելու համար:

Հիսուսի ծառայության մեջ մարդիկ բժշկվում էին ամեն տեսակի տկարությունից և հիվանդությունից: Դրսևորվում էին բժշկությունների բոլոր պարգևները, քանի որ Հոգին «չափով չէր տրված» Հիսուսին:

Բժշկությունների երկու տարբեր դրսևորումներ

Տարբերություն կա բժշկությունների պարգևների դրսևորման և Աստծո Խոսքի հանդեպ մեր հավատքով բժշկություն ստանալու միջև: Տարիների ընթացքում Աստված ինձ սովորեցրել է այս երկուսի միջև եղած տարբերությունը:

Երբ ես իմ մարմնում բժշկություն ստացա, ոչ ոք ինձ վրա ձեռք չէր դրել: Իրականում չգիտեի, որ կան եկեղեցական խմբակներ, որոնք հավատում էին աստվա-

ծային բժշկությանը, սակայն որպես մկրտական տղա, որ հիվանդության մահճում էր, կարդացել էի տատիկիս մեթոդիստական Աստվածաշունչը և բժշկվել, ոչ թե պարզապես որովհետև պարտադիր հավատում էի աստվածային բժշկությանը, այլ քանի որ վարվել էի ըստ Մարկոս 11.24-ի և կանգնել այդ խոսքի վրա. *«...Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացեք, թե կառնեք, և կլինի ձեզ»*:

Ուստի աղոթեցի և ասացի. «Հավատում եմ, որ բժշկություն եմ ստանում իմ արատավոր սրտի համար: Հավատում եմ, որ բժշկություն եմ ստանում կաթվածահար եղած մարմնիս համար: Հավատում եմ, որ բժշկություն եմ ստանում գլխիս ծայրից մինչև ոտքիս մատները»: Դրանից հետո Աստծո բժշկարար զորությունը դրսևորվեց իմ մարմնում:

Իմ բժշկությունը եկավ ուղիղ Աստծուց: Բժշկությունների պարգևները այլ մարդկանց միջոցով են փոխանցվում քեզ: Բոլոր բժշկություններն անողն էլ իհարկե Աստված է. տարբերությունը ուղին է, որը Նա օգտագործում է բժշկություն կատարելու համար:

Մեկ անգամ մի մարդ ասաց, որ ցանկացած բժշկություն, որ մարդը ստանում է, տեղի է ունենում բժշկությունների պարգևների դրսևորման արդյունքում: Այո՛, որոշակի իմաստով բժշկությունը միշտ էլ պարգև է, քանի որ ցանկացած բան, որ մենք Աստծուց ստանում ենք, ընդհանուր առմամբ պարգև է: Սակայն պարտադիր չէ, որ բժշկությունը տեղի ունենա այդ պարգևների դրսևորման արդյունքում:

Նորից կարդանք Ա Կորնթացիս 12.28-րդ խոսքերը. *«Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում...»:* Այստեղ Նա

խոսում է ոչ թե հոգևոր պարգևների, այլ *հոգևոր պարգևներով օժտված* մարդկանց մասին. *«Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. առաջ՝ առաքյալներին...»:* Առաքյալ լինելը անհատական հոգևոր պարգև չէ, որը մարդը կարող է ստանալ Աստծուց: Այն *ծառայության* պարգև է եկեղեցուն: *«...երկրորդ՝ մարգարեներին...»:* Սա նույնպես ծառայություն է՝ ոչ թե անհատին օրհնելու համար, այլ ծառայության պարգև է եկեղեցուն: *«...երրորդ՝ վարդապետներին...»:* Վարդապետ լինելու պարգևը չի տրվում անհատին՝ որպես իր համար օրհնություն: Այն տրվում է, որպեսզի անհատը կարողանա օրհնել ուրիշներին. սա ևս ծառայություն է:

Պողոսը շարունակում է և խոսում հրաշագործություններից: Նա ասում է, որ ծառայության մեջ կան մարդիկ, որոնք օժտված են հրաշագործությունների և *«..հետո՝ բժշկությունների պարգևներով...»:*

Այնուհետև Պողոսը հարց է ուղղում՝ *«Միթե ամենն առաքյալներ են* [արդյո՞ք բոլորն ունեն առաքյալ լինելու պարգև: Իհարկե՛ ոչ]: *Միթե ամենը մարգարեներ են* [արդյո՞ք բոլորն ունեն մարգարե լինելու պարգև. ո՛չ]: *Միթե ամենը վարդապետներ են*»: Ո՛չ, բոլորը չէ, որ ունեն վարդապետի ծառայության պարգև: Բոլորս կարող ենք սովորեցնել ըստ մեր ունեցած գիտելիքի, սակայն կան մարդիկ, որոնց Աստված դրել է եկեղեցում, և որոնք Սուրբ Հոգու կողմից օժտված են վարդապետության պարգևով:

Պողոսը շարունակում է հարցնել՝ *«Միթե ամենը զորություններ անող են: Միթե ամենը բժշկությունների պարգևներ ունեն: Միթե ամենը լեզուներ են խոսում: Միթե ամենը թարգմանում են»*: Ակնհայտ է, որ պատաս-

խանն է «ոչ», քանի որ Հոգին բաժանում է *«ամեն մեկին ինչպես կամենում է»* (Ա Կորնթ. 12.11):

Փառք Աստծուն Իր Խոսքի համար և հավատալու ու Նրա Խոսքի համեմատ վարվելու արտոնության համար: Փա́ռք Աստծուն բոլոր այս պարգևների գերբնական դրսևորման համար՝ Իր կամքի համաձայն:

Անգիր.

«Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց, որ ման եկավ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով: Որովհետև Աստված նրա հետ էր»:
– Գործք 10.38

Մարգարեության պարգևը

Հատվածներ Աստվածաշնչից՝
Ա Կորնթացիս 14.1-5, Գործք առաքելոց 21.8-11,
Ա Թեսաղոնիկեցիս 5.19-21

Առանցքային ճշմարտություն. Մարգարեությունը գերբնական խոսք է, որն արտահայտվում է հայտնի լեզվով:

Մարգարեությունը խոսքի կամ ներշնչման երեք պարգևներից ամենակարևորն է: Ամենակարևորն է, քանի որ մյուս երկու պարգևները միասին՝ այլևայլ լեզուները և լեզուների մեկնությունը, հավասար են մարգարեությանը:

Պողոսն ասել է՝ *«...ավելի մեծ է մարգարեացողը, քան թե լեզուներով խոսողը, միայն եթե թարգմանի...»* (Ա Կորնթ. 14.5). սա նշանակում է, որ լեզուներով խոսելն ու մեկնելը հավասարազոր են մարգարեությանը: Հետևաբար մարգարեությունն իսկապես խոսքի կամ ներշնչման երեք պարգևներից ամենակարևորն է:

Մարգարեությունը գերբնական խոսք է, որն արտահայվում է հայտնի լեզվով: Այլևայլ լեզուները գերբնական խոսքեր են, որն արտահայվում է անհայտ լեզվով: Լեզուների մեկնությունը գերբնական ձևով բացահայտում է այն, ինչ ասվել է լեզուներով:

Երբայերեն բառը, որը թարգմանվել է «մարգարեություն», նշանակում է «հոսել առաջ»: Այն կրում է «շատրվանի նման ցայտել», «թույլ տալ, որ կաթի», «բարձրացնել», «առաջ գլորվել», «դուրս հորդել» իմաստները: Հունարեն բառը, որը թարգմանվել է «մարգարեանալ», նշանակում է «ինչ-որ մեկի փոխարեն խոսել»: Այն նշանակում է խոսել Աստծո փոխարեն կամ լինել Նրա պատվիրակը:

Մարգարեության պարգևը բոլորի համար

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 14.1-5

1 Սիրո՛ւն հետևեք և հոգևոր պարգևներին նախանձավո՛ր եղեք և մանավանդ որ մարգարեանաք:

2 Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ Աստծո հետ: Որովհետև ոչ ոք չի լսում, բայց հոգով խորհուրդներ է խոսում:

3 Իսկ մարգարեացողը մարդկանց հետ շինություն և մխիթարություն և սփոփություն է խոսում:

4 Լեզվով խոսողը իր անձն է շինում, իսկ մարգարեացողը եկեղեցին է շինում:

5 Ես կամենում եմ, որ դուք ամենդ լեզուներով խոսեք, բայց մանավանդ որ մարգարեանաք: Որովհետև ավելի մեծ է մարգարեացողը, քան թե լեզուներով խոսողը, միայն եթե թարգմանի, որ եկեղեցին շինություն առնի:

Սուրբ գրքի այս հատվածում Պողոսն ասում է մեզ, որ ցանկանանք ունենալ հոգևոր պարգևները և հատկապես մարգարեության պարգևը: Սա չի նշանակում, որ չպետք է ցանկանալ մյուս պարգևները, այլ որ այս պարգևը

պետք է առաջինը դասենք: Նույն գլխի վերջում Պողոսը կրկնում է. *«Ուրեմն, եղբայրներ, ջա՛նք արեք, որ մարգարեանաք»*: Այսինքն՝ Պողոսը Սուրբ Հոգու ներշնչմամբ շեշտադրում է մարգարեության կարևորությունը:

Մարգարեության պարգևը և մարգարեի ծառայությունը

Մարգարեության պարզ *պարգևը* չպետք է շփոթել *մարգարեի ծառայության* հետ: *«Իսկ մարգարեացողը մարդկանց հետ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ և ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ և ՍՓՈՓՈՒԹՅՈՒՆ է խոսում»* (Ա Կորնթ. 14.3): Ուստի պարզ տեսնում ենք, որ մարգարեության պարզ պարգևի մեջ չկա բացահայտում: Մինչդեռ մարգարեի ծառայության մեջ հաճախ ենք տեսնում, որ նույնիսկ մարգարեության միջոցով բացահայտում է արվում:

Հետաքրքիր է նաև դիտարկել մարգարեության տարբերությունը Հին և Նոր Կտակարաններում: Հին Կտակարանում մարգարեությունը հիմնականում ապագայի իրողությունների *կանխատեսումն* էր, մինչդեռ Նոր Կտակարանում այն կտրուկ վերափոխվում է: *Մարգարեության պարզ պարգևը չի ենթադրում կանխատեսում:*

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ Պողոսը Կորնթոսի ամբողջ եկեղեցուն ասում է, որ ջանք անեն մարգարեանալ և ցանկանան ունենալ հոգևոր պարգևները, *«մանավանդ որ մարգարեանան»*: Իսկ դրանից առաջ՝ Ա Կորնթացիս 12-րդ գլխում, ասում էր, որ Աստված եկեղեցում դրել է *«...առաջ՝ առաքյալներին. երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին...»* (խ. 28):

Այնուհետև Պողոսը հարցնում է *«Մի՞թե ամենն առաք-*

յալներ են»: Պատասխանն է՝ ո՛չ: «*Մի՞թե ամենը մարգարեներ են»:* Նման բան չի կարող լինել: Եթե մարգարեանալը մարդուն դարձներ մարգարե, ապա Պողոսն ինքն իրեն կհակասեր: Ինչևէ, *այն փաստը, որ դուք մարգարեացել եք, դեռևս չի նշանակում, որ մարգարե եք*: Դա նշանակում է, որ դուք գործի եք դրել մարգարեության պարզ պարգևը:

Օրինակ՝ հարուստն ունի գումարներ: Բոլորս էլ ինչ-որ չափի գումար ունենք, սակայն դա մեզ չի հարստացնում: Նույն կերպ մարգարեն մարգարեանում է, սակայն ամեն մարգարեացող չէ, որ մարգարե է: Մարգարեն ունի Հոգու ավելի շատ պարգևներ, քան միայն մարգարեության պարգևն է: Մարգարեության պարգևի հետ նա պետք է ունենա նաև հայտնության պարգևները:

Ա Կորնթացիս 14.29-ում Պողոսն ասում է. «*Բայց մարգարեներից թող երկուսը կամ երեքը խոսեն, և ուրիշները քննեն»:* Իսկ 30-րդ խոսքում ասվում է. *«Բայց եթե մի ուրիշին, որ այնտեղ նստած է* [այսինքն՝ այլ մարգարեի], *հայտնություն լինի, առաջինը թող լռի»:* Այստեղ նա խոսում է հայտնության մասին: Մարգարեի պարագայում գործում են նաև հայտնության այդ մյուս պարգևները:

Ուստի մարգարեի ծառայության մեջ լինելու համար տվյալ անձն իր ծառայության մեջ պետք է օգտագործի մարգարեության պարգևը և հայտնության պարգևներից նվազագույնը երկուսը՝ իմաստության խոսքը, գիտության խոսքը և/կամ հոգիների զանազանության պարգևը:

Հետևաբար մենք չպետք է շփոթենք մարգարեի ծառայությունը մարգարեության պարզ պարգևի հետ, քանի որ Աստված չէր ասի մեզ, որ նախանձավոր լինեինք մի բանի համար, ինչը մեզ հասու չէ: Բոլորը կարող են մարգարեանալ, սակայն բոլորը չէ, որ մարգարեներ են:

Գործք 21-րդ գլխում տեսնում ենք մարգարեության պարգևի սուրբգրային պատկեր:

ԳՈՐԾՔ 21.8-11

8 Եվ հետևյալ օրն այնտեղից դուրս ելանք մենք՝ Պողոսի ընկերներս, եկանք Կեսարիա: Եվ Փիլիպոս ավետարանչի տունը մտնելով, որ այն յոթից էր, նրա մոտ մնացինք:

9 Նա չորս կույս աղջիկներ ուներ, որ մարգարեություն էին անում:

10 Եվ երբ մենք այնտեղ շատ օրեր մնում էինք, Հրեաստանից մի մարգարե իջավ՝ անունն Ագաբոս:

11 Եվ նա մեզ մոտ եկավ, Պողոսի գոտին առավ, իր ձեռները և ոտները կապեց և ասաց. «Սուրբ Հոգին այսպես է ասում՝ այն մարդին, որի գոտին է այս, հրեաները Երուսաղեմում այսպես կկապեն և հեթանոսների ձեռքը կմատնեն»:

Ուշադրություն դարձրեք, որ Փիլիպոսի բոլոր չորս դուստրերն ունեին մարգարեության պարզ պարգևը: Այս երիտասարդ աղջիկները պետք է որ մարգարեացած լինեին իրենց տանն անցկացվող ծառայությունների ժամանակ. այլապես Պողոսը և նրա հետ լինողները չէին իմանա, որ նրանք մարգարեանում էին: Նրանք շինության, մխիթարության և սփոփության խոսքեր էին խոսում բոլոր ներկա լինողների համար: Ակներևաբար նրանք երբեք չէին մարգարեացել Պողոսի համար: Երբ եկավ Ագաբոս մարգարեն, նա ավելի բարձր կարգի բան ասաց, ինչը *բացահայտում* բերեց:

Ուստի տեսնում ենք, որ մարգարեն կարող է մարգա-

ռեանալ, սակայն այն ուղերձը, որ նա տալիս է, կարող է բոլորովին մարգարեություն չլինել: Այն կարող է գալ մարգարեության պարգևի միջոցով, քանի որ նա ասում է այն, ինչ Տիրոջից է լսել՝ «այսպես է ասում Տերը»: Գործք 21.10, 11-ում դրսևորվում է հայտնության պարգևներից մեկը՝ *իմաստության խոսքը,* որը գործում է մարգարեության պարգևի միջոցով:

Ոմանք կարծում են, թե մարգարեանալ նշանակում է քարոզել: *Աստծուց ներշնչված* ամեն խոսք այս կամ այն կերպ մարգարեություն է, սակայն մարգարեությունը քարոզը չէ: Քարոզի մեջ մերթընդմերթ կարող է լինել մարգարեության տարր, երբ քարոզիչը օծված է Հոգով և առաջնորդվում է ասելու բաներ, որոնք գալիս են սրտից և ոչ թե մտքից, սակայն սա մարգարեության պարգևի միայն մի մասն է:

Քարոզել նշանակում է հռչակել, հայտարարել, գոչել կամ պատմել: Մարգարեության պարգևի սուրբգրային նպատակը տարբերվում է քարոզի նպատակից: Հիսուսը չասաց, որ մարդիկ կփրկվեն մարգարեության հիմարությունից, այլ *քարոզչության* հիմարությունից: Գերբնական պարգևները տրվում են մարդկանց ուշադրությունը գրավելու, ոչ թե նրանց փրկելու համար: Նույնիսկ Պենտեկոստեի օրը, երբ մարդիկ խոսում էին լեզուներով, ոչ ոք չփրկվեց, մինչև Պետրոսը ոտքի չկանգնեց և *չքարոզեց* նրանց:

Պարգևի սխալ գործածություն

Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ 5.19-21

19 Հոգին մի՛ հանգցրեք:

20 Մարգարեությունները մի՛ անարգեք:

21 Ամեն բան փորձե՛ք, բարին ամուր բռնե՛ք:

Մեկ այլ բան, որ շփոթմունքի տեղ է տալիս, այս պարգևի սխալ գործածությունն է: Թեսաղոնիկեի եկեղեցին այնքան շատ էր սխալ գործածության մեջ դրել մարգարեության պարգևը, որ այն գրեթե անարգում էին: Այդ պատճառով Աստծո Հոգով առաջնորդված՝ Պողոսը ստիպված էր ասել նրանց. «Մարգարեությունները մի՛ անարգեք»: Եթե մարդիկ այս պարգևն օգտագործեին, ինչպես Աստծո Խոսքն է սովորեցնում, այն մեծ օրհնություն կլիներ: Սակայն ոմանք, երբ լսում են, որ մարգարեի ծառայության մեջ լինողը բացահայտող ինչ-որ բան է ասում, կարծում են, թե իրենք էլ կարող են դա անել, փորձում են կանխատեսումներ անել ու խնդրի մեջ են հայտնվում:

Ինչպես տեսանք, մարգարեության պարգևը տրված է եկեղեցու շինության համար: «*Իսկ մարգարեացողը մարդկանց հետ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ և մխիթարություն և սփոփություն է խոսում*» (Ա Կորնթ. 14.3)*: «...մարգարեացողը եկեղեցին է ՇԻՆՈՒՄ»* (Ա Կորնթ. 14.4): Այս պարգևը տրված է եկեղեցին շինելու համար: Այստեղ օգտագործված «շինել» բառը հունարենում նշանակում է «Աստծուն ավելի մոտ կանչել»: Այնուհետև Խոսքն ասում է, որ մարգարեությունը տրված է *մխիթարության* համար: Շատ բաներ, որոնք մարդիկ մարգարեություն են անվանում, ոչ մեկին չեն մխիթարում, ընդհակառակը՝ անհանգստություն են պատճառում:

Մարգարեությունը և աղոթքի կյանքը

Մարգարեության պարգևը, այնպես, ինչպես լեզուները, ավելին է, քան պարզապես հրապարակային խոսքը: Մարգարեությունը կարող է գործածվել նաև աղոթքի կյանքում:

Շատ անգամներ, երբ աղոթում եք, Աստված լցնում է

ձեզ Հոգով, և դուք խոսում եք Հոգով և լեզուներով: Լեզուներով խոսելը սկիզբն է, սակայն Աստված ցանկանում է, որ Հոգով լցված ամեն հավատացյալ ավելին անի, քան լեզուներով խոսելն է: Նա ցանկանում է, որ մենք կարողանանք մեկնել լեզուները: Ինչպես նաև ցանկանում է, որ մարգարեանանք:

Պողոսը նկատի չուներ, որ միայն մի քանի հավատացյալ կարող են լեզուներով խոսել: Նա Կորնթոսի ամբողջ եկեղեցուն էր հորդորում աղոթել լեզուներով և երկրպագել Աստծուն: Այնուհետև ասում է. *«...լեզվով խոսողը թող աղոթք անի, որ թարգմանի էլ»* (Ա Կորնթ. 14.13): Աստված չէր ասի մեզ, որ աղոթենք մի բանի համար, ինչը չենք կարող ունենալ: Նա ցանկանում է նաև, որ մարգարեանանք, քանի որ պարզ ասել է՝ *«...հոգևոր պարգևներին նախանձավո՛ր եղեք և մանավանդ որ մարգարեանաք»* (Ա Կորնթ. 14.1): Այնուհետև ասում է, որ ջանք անենք մարգարեանալու:

Մարգարեության այս պարգևի միջոցով մենք կարող ենք գերբնական բաներ ասել ո՛չ միայն մարդկանց, այլև Աստծուն: Մարգարեության միջոցով կարող ենք վայելել Աստծո ընկերակցությունը Հոգում ավելի, քան նախկինում երբևէ:

Անգիր.

«Իսկ մարգարեացողը մարդկանց հետ շինություն և մխիթարություն և սփոփություն է խոսում»:
– Ա Կորնթ. 14.3

Լեզուների պարգևը

Հատվածներ Աստվածաշնչից՝ Մարկոս 16.15-18

Առանցքային ճշմարտություն. Այլևայլ լեզուները Սուրբ Հոգուց տրված գերբնական խոսքեր են այնպիսի լեզուներով, որոնք խոսողը երբեք չի սովորել և մտքով չի հասկանում, ոչ էլ լսողն է պարտադիր հասկանում:

Շարունակելով մեր ուսումնասիրությունը՝ այժմ անդրադառնանք *լեզուների պարգևին* կամ «այլևայլ լեզուներին»: Սուրբ գիրքն ասում է. *«...ուրիշին՝ այլևայլ լեզուներ...»* (Ա Կորնթ. 12.10): «Այլևայլ» բառը շեղագիր է գրված Աստվածաշնչի «Քինգ Ջեյմս» թարգմանությունում, ինչը նշանակում է, որ ավելացված է թարգմանչի կողմից: Իրականում խոսքն ասում է՝ *«...ուրիշին՝ լեզուների տեսակներ...»:* Նույն այս գլխում՝ մի փոքր ներքևում, Պողոսն ասում է, որ Աստված եկեղեցում դրել է *«այլևայլ լեզուներ»* (խ. 28): Հետևաբար ընդունելի կլինի ասել «լեզուների այլևայլ տեսակներ» կամ տարբեր տեսակի լեզուներ:

Այլևայլ լեզուները Սուրբ Հոգուց տրված գերբնական խոսքեր են այնպիսի լեզուներով, որոնք խոսողը երբեք չի սովորել և մտքով չի հասկանում, ոչ էլ լսողն է պարտադիր հասկանում: Լեզուներով խոսելը որևէ առնչություն չունի լեզվական ունակությունների հետ. այն

առնչություն չունի մարդու մտքի կամ ինտելեկտի հետ: Սա բանավոր հրաշք է:

Լեզուների պարգևը ամենատարածվածն է երեք բանավոր պարգևներից կամ, ինչպես երբեմն ասում են, խոսքի կամ ներշնչման պարգևներից, այն է՝ *մարգարեության* պարգև, այլևայլ լեզուներ և լեզուների մեկնություն: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ լեզուների պարգևը լավագույնն է: Այն ամենատարածվածն է մի քանի պատճառներով:

Ինչո՞ւ է լեզուների կարևորությունը շեշտադրվում որոշ շրջանակներում

Որոշ հարանվանական հավատացյալներ հաճախ հարցնում են. «Ինչո՞ւ են Ամբողջական Ավետարանի հավատացյալները շեշտադրում լեզուները»: Պատասխանը հետևյալն է. «Մենք չենք շեշտադրում այն»: Մի քանի պատճառ կա, թե ինչու է թվում, թե շեշտադրում ենք.

1. Մեզ հաճախ են հարցնում լեզուների մասին, հետևաբար մենք ներգրավվում ենք այդ թեմայի շուրջ ծավալվող քննարկումներում:
2. Երբ մարդիկ մկրտվում են Սուրբ Հոգով, դա միշտ արտահայտվում է լեզուներով խոսելով:
3. Հավաքույթների ժամանակ լեզուներով խոսելը պարգևներից ամենափոքրն է, հետևաբար այն ամենատարածված և ամենահաճախ գործածվող պարգևն է:
4. Լեզուների և լեզուների մեկնության պարգևները տարբերվում են ընդունված կարգից: Հոգու մյուս բոլոր պարգևները՝ իմաստության խոսքը, գիտության խոսքը, հոգիների զանազանությունը, հատուկ

հավատքը, հրաշագործությունները, բժշկությունների պարգևները և մարգարեությունը, կարող ենք տեսնել Հին Կտակարանում: Հիսուսի ծառայության մեջ ևս տեսնում ենք Հոգու բոլոր պարգևները՝ բացի լեզուներից և լեզուների մեկնությունից: Լեզուներով խոսելու և լեզուները մեկնելու պարգևները տարբերվում են այն կարգից, որի մեջ ապրում ենք: Ուստի դրանք ավելի շատ են օգտագործվում:

5. Պողոսը կարևորություն էր տալիս լեզուներին: Պատճառն այն էր, որ ինչպես այսօր, այնպես էլ այն ժամանակ լեզուներով խոսելու մասին մեծ թյուրըմբռնում կար:

Լեզուներ՝ գերբնական նշան

Մարկոս 16.17-րդ խոսքերում Հիսուսն ասում է. *«Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն... նոր լեզուներ կխոսեն...»*: Մի քարոզիչ, փորձելով սա բացատրել, ասել է. «Սա պարզապես նշանակում է, որ այն մարդը, ով նախկինում հայհոյել է, ստել և անհարիր կատակներ արել, այլևս այդպես չի վարվի, այլ նոր լեզվով կխոսի»: Այս փաստարկը, սակայն, այդքան էլ հիմնավոր չէ, քանի որ ամբողջ տեքստը կարդալով՝ տեսնում ենք, որ այստեղ Հիսուսի նշած բոլոր նշանները գերբնական էին:

ՄԱՐԿՈՍ 16.15-18

15 Եվ նրանց ասաց. «Գնացե՛ք բոլոր աշխարհը, ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի»:

16 Ով որ հավատաց և մկրտվեց, կփրկվի: Եվ ով որ չհավատաց, կդատապարտվի:

17 Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներ կխոսեն:

18 Օձեր վեր կառնեն և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան:

Վերլուծող ոչ մի մարդ կասկածի տակ չի առնի այն, որ նշված բոլոր չորս նշանները գերբնական են, վստահաբար՝ նաև հինգերորդը: Հետևաբար պատճառներից մեկը, թե ինչու ենք մենք խոսում լեզուներով, այն է, որ Հիսուսն ասել է՝ դա նշան է, որը հետևում է հավատացյալներին: Սա սուրբգրային ապացույց է. այն Սուրբ Հոգով մկրտության առաջին նշանն է:

Մի քարոզիչ, չհամաձայնելով սրա հետ, ասել է. «Հովհաննես Մկրտիչը լցված էր Սուրբ Հոգով, սակայն չէր խոսում լեզուներով: Հին Կտակարանի մարգարեները ունեին Սուրբ Հոգի, սակայն երբեք չեն խոսել լեզուներով»:

Իմ պատասխանը հետևյալն է. «Այո՛, սակայն մենք չենք ապրում Հին ուխտի ներքո»:

Այն, ինչ տեղի է ունեցել այդ ժամանակներում, օրինակ է ներկայի համար: Մենք ցանկանում ենք, որ Սուրբ Հոգին գործի մեր կյանքերում ըստ այն կարգի, որում ապրում ենք: Հետևաբար պետք է սկսենք Գործք առաքելոցից, քանի որ այդտեղ ենք ապրում:

Հովհաննես Մկրտիչը Հին ուխտի ներքո ապրող մարգարե էր: Հիսուսն Ինքը Հովհաննեսի մասին ասել է. *«...կանանց ծնածների մեջ չի վեր կացել Հովհաննես Մկրտչից մի մեծը, բայց երկնքի արքայության միջի փոքրը նրանից մեծ է»* (Մատթ. 11.11):

Այն կարգում, որում մենք ենք գտնվում, *ավելի լավ* ուխտ ունենք, որը հիմնված է *ավելի լավ խոստումների վրա* (Երբ. 8.6), հատկապես, երբ խոսքը վերաբերում է Սուրբ Հոգուն:

Լեզուներ՝ նվիրման պարգև

Լեզուների վերաբերյալ շեշտադրումը պետք է անենք ճիշտ տեղում: Լեզուների պարգևը նախ և առաջ նվիրման պարգև է:

Կորնթոսի եկեղեցուն հետևյալ խոսքերը գրելով՝ *«Գոհանում եմ իմ Աստծուց, որ ձեր ամենից ավելի լեզուներով խոսում եմ»* (Ա Կորնթ. 14.18)՝ Պողոսը ներկայացնում էր նրանց լեզուների նպատակը և բացատրում էր, թե ինչ կարող էր լեզուներով խոսելն անել իրենց համար: Լեզուների պարգևը նախ և առաջ նվիրման պարգև է, որը մենք պետք է օգտագործենք մեր աղոթքի կյանքում՝ Աստծուն ուղղված փառաբանության և երկրպագության մեջ:

Պողոսը սովորեցնում էր, որ միայն որոշ հավատացյալներ կօգտագործվեն նրա մեջ, ինչը կոչում ենք *լեզուների հրապարակային ծառայություն*, քանզի Ա Կորնթացիս 12.30-ում ասել է՝ *«Մի՞թե ամենը լեզուներ են խոսում»:* Ոմանք այս խոսքը կտրում են համատեքստից և ասում՝ «Լեզուներով խոսելը բոլորի համար չէ: Կարող ես Հոգով լցվել՝ առանց լեզուներով խոսելու»: Այնուամենայնիվ, չպետք է մոռանանք, որ Պողոսը խոսում է լեզուներով խոսելու ծառայության պարգևի մասին, քանի որ սրա մասին իր խոսքը հետևյալ կերպ է սկսում. *«Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. առաջ՝ առաքյալներին. երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին, հետո՝ զորություններ, հետո՝ բժշկությունների պարգևներ, օգնություններ, կառա-*

վարություններ, այլևայլ լեզուներ» (Ա Կորնթ. 12.28):

Այնուհետև Պողոսը հարցնում է. «*Միթե ամենն առաքյալներ են* [ոչ, բոլորը չեն]: *Միթե ամենը մարգարեներ են* [ոչ, չեն]: *Միթե ամենը վարդապետներ են: Միթե ամենը զորություններ անող են: Միթե ամենը բժշկությունների պարգևներ ունեն* [ոչ, չունեն]*: Միթե ամենը լեզուներ են խոսում»*: Ակնհայտ է, որ պատասխանն է «ոչ»: Սակայն այստեղ Պողոսը խոսում է *հրապարակային ծառայության* մասին:

Մենք չպետք է շատ մտահոգվենք լեզուներով և լեզուների մեկնությամբ ծառայելու մասին: Մեզ գլխավորապես պետք է հուզի այն, որ լեզուները պահենք ճիշտ տեղում, որին դրանք առաջնայնորեն պատկանում են՝ որպես նվիրման պարգև՝ օգնելու մեզ Աստծուն երկրպագելու:

Հովարդ Քարթերն ասել է. «Չպետք է մոռանանք, որ այլ լեզուներով խոսելը ոչ միայն առաջին ապացույցն է այն բանի, որ Սուրբ Հոգին բնակվում է մարդու մեջ, այլև շարունակական վերապրում է կյանքի ամբողջ ընթացքում, որն օգնում է երկրպագելու Աստծուն: Այն հոսող գետ է, որը երբեք չպետք է կանգ առնի, և որը հոգևոր առումով հարստացնում է կյանքը»:

Կարծում եմ, հետևյալ խոսքերով Պողոսն ասում է, որ ինքը երբեք հրապարակայնորեն չի օգտագործում լեզուները. *«Գոհանում եմ իմ Աստծուց, որ ձեր ամենից ավելի լեզուներով խոսում եմ: Բայց եկեղեցու մեջ…»* (Ա Կորնթ. 14.18, 19): Սա կարծես թե նշանակում է, որ Պողոսը եկեղեցում չէր խոսում լեզուներով: Այնուհետև շարունակում է. «*Բայց եկեղեցու մեջ ավելի կամենում եմ, որ հինգ խոսք իմ մտքով խոսեմ, որ ուրիշներին էլ բան սովորեցնեմ, քան թե բյուրավոր խոսքեր՝ լեզուներով»* (խ. 19):

Լեզուներով խոսելը ոչ վարդապետական պարգև է,

ոչ էլ քարոզելու պարգև: Այն այդ նպատակները չի հետապնդում: Եթե ես ամբիոնից սովորեցնելու փոխարեն մեկ ժամ խոսեի լեզուներով, դա բոլորովին շինություն չէր բերի եկեղեցուն: Շինություն կբերեր ինձ, սակայն ոչ ինձ լսողներին: Հետևաբար եկեղեցում հայտնի լեզվով սովորեցնելն առավել օգտակար է:

Այդուհանդերձ, «*...ավելի կամենում եմ, որ հինգ խոսք իմ մտքով խոսեմ...*» արտահայտությամբ Պողոսը չի նսեմացնում լեզուների կարևորությունը: Նա պարզապես տարբերակում է դնում լեզուների պարգևի մասնավոր և հրապարակային կիրառությունների մեջ: Նա ասում է՝ «*ավելի նախընտրում եմ հինգ խոսք խոսել իմ մտքով, որպեսզի կարողանամ, իմ ձայնն օգտագործելով, ուրիշներին էլ սովորեցնել, քան տասը հազար խոսք՝ անհայտ լեզվով»:* Այլ կերպ ասած՝ նա նկատի ուներ հետևյալը. «Դուք ավելի մեծ օգուտ կստանաք այն հինգ բառերից, որոնք ձեզ հայտնի լեզվով են ասվել, քան լեզուներով ասված տասը հազար բառից»:

Լեզուները՝ հրապարակային ծառայության մեջ

Աստված որոշ մարդկանց կօգտագործի լեզուների հրապարակային դրսևորման մեջ, սակայն սա պարգև է և նախատեսված չէ բոլորի համար (սա այն սխալն է, որն անում էին կորնթացիները, և որը հաճախ անում ենք մենք):

Անդրադառնալով լեզուների հրապարակային ծառայությանը՝ Պողոսն ասել է. *«Եթե մեկը լեզվով խոսի, թող երկու, և եթե էլ ավելի շատ՝ երեք լինեն, մեկը մյուսից հետո: Եվ մեկը թող թարգմանի: Բայց եթե թարգմանող չկա, թող լռի եկեղեցում: Թող իր համար և Աստծո հետ*

խոսի» (Ա Կորնթ. 14.27, 28): Հունարենում օգտագործված «երկու» և «երեք» բառերը անձնական դերանուններ են և վերաբերում են մարդկանց:

Պողոսը պարզապես ասում էր, որ երկու-երեքից ավելի մարդիկ չպետք է խոսեն ծառայության ժամանակ: Հաջորդ խոսքում նա ասում է՝ *«Մարգարեներից թող երկուսը կամ երեքը խոսեն...»*: Գուցե էլի մարգարեներ ներկա լինեն, որոնք կարող են խոսել, սակայն մեկ ծառայության ընթացքում նրանցից միայն երկուսը կամ երեքը պետք է խոսեն:

Մենք պետք է զգույշ լինենք, որ մեղմությամբ վարվենք Տիրոջ առջև: Պետք է բաց մնանք Նրա համար՝ հանդարտորեն, պատվով և ակնածանքով վարվելով հոգևոր հարցերում: Եվ պետք է հրավիրենք Աստծո Հոգու ներգործությունը մեզանում:

Անգիր.

«Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն... նոր լեզուներ կխոսեն»:
– Մարկոս 16.17

Լեզուների մեկնություն

Հատվածներ Աստվածաշնչից՝
Ա Կորնթացիս 14.13-15, 27, 28, 40

Առանցքային ճշմարտություն. Լեզուների մեկնությունը այլ լեզուներով արված արտահայտությունների իմաստի գերբնական բացահայտումն է Սուրբ Հոգու կողմից:

Սուրբ Հոգու պարգևների ուսումնասիրությունը բերեց մեզ ցանկի վերջին կետին՝ *լեզուների մեկնության* պարգևին:

Սկզբում քննարկեցինք հայտնության երեք պարգևները կամ այն երեք պարգևները, որոնք ինչ-որ բան են բացահայտում՝ *իմաստության խոսք, գիտության խոսք* և *հոգիների զանազանություն*: Այնուհետև ուսումնասիրեցինք այն երեք պարգևները, որոնք ինչ-որ բան են անում կամ, ինչպես դրանք կոչում են, զորության երեք պարգևները՝ *հավատքի պարգև, հրաշագործություններ* և *բժշկությունների պարգևներ*: Ի վերջո ուսումնասիրեցինք երեք բանավոր պարգևները կամ ներշնչման երեք պարգևները՝ այն երեքը, որոնք ինչ-որ բան են ասում՝ *մարգարեություն*, *այլևայլ լեզուներ* և *լեզուների մեկնություն*:

Ինչպես արդեն նշել ենք, *մարգարեությունը* գերբնական խոսք է հայտնի լեզվով: *Այլևայլ լեզուները* գերբնա-

կան խոսք է անհայտ լեզվով: Իսկ *լեզուների մեկնությունը* այլ լեզուներով արված արտահայտությունների իմաստի գերբնական բացահայտումն է Սուրբ Հոգու կողմից: Անգլերենից բառացի թարգմանության մեջ ոչ թե լեզուների *թարգմանություն* է, այլ լեզուների *մեկնություն*:

Լեզուների մեկնության պարգևը Սուրբ Հոգու ինը պարգևներից ամենափոքրն է, քանի որ դրա գործառնությունը կախված է մեկ այլ պարգևից: Այն չի գործի, եթե լեզուների պարգևը չգործի: Լեզուների մեկնության այս պարգևի նպատակը լսողների համար լեզուները հասկանալի դարձնելն է, որպեսզի թե՛ պարգևն ունեցողը և թե՛ եկեղեցին իմանան, թե ինչ է ասվում, ու շինվեն: Պողոսն ասել է. *«...ավելի մեծ է մարգարեացողը, քան թե լեզուներով խոսողը, միայն եթե թարգմանի, որ եկեղեցին շինություն առնի»* (Ա Կորնթ. 14.5):

Սակայն արդյոք Աստված չի՞ կարող այլ կերպ խոսել մեզ հետ: Իհարկե կարող է և խոսում է: Մենք ստանում ենք ուղերձներ, որոնք տրվում են ոչ թե լեզուների մեկնության միջոցով, այլ մարգարեության պարգևի դրսևորմամբ: Բոլոր այս պարգևները գործում են հավատքով, սակայն ավելի մեծ հավատք է պահանջվում մարգարեանալու համար, քան լեզուներով խոսելու կամ լեզուները մեկնելու համար, քանի որ վերջին երկու պարգևներով գործողները կարող են հենվել մեկ այլ անձնավորության վրա: Այլ կերպ ասած՝ լեզուների պարգևն ունեցողը կարող է հենվել լեզուների մեկնության պարգև ունեցողի վրա և հակառակը: Իսկ ինչ վերաբերում է մարգարեացողին, նա պետք է բավականաչափ հավատք ունենա՝ խոսելու համար այն, ինչ ստացել է:

Մեկնություն, ոչ թե թարգմանություն

Ինչպես նշեցինք, պարգևը ոչ թե լեզուների *թարգմանությունն* է, այլ *մեկնությունը*: Ինձ երբեմն հարցնում են, թե ինչու է պատահում այնպես, որ ինչ-որ մեկը երկար խոսում է լեզուներով, իսկ մեկնողը միայն կարճ մեկնություն է տալիս: Պատճառն այն է, որ մեկնությունը լեզուներով ասվածի *իմաստի* գերբնական բացատրությունն է՝ տրված Սուրբ Հոգու կողմից. մեկնության համար կարող են այնքան բառեր անհրաժեշտ չլինել, որքան սկզբնաղբյուր ուղերձում կային: Նույն կերպ էլ ինչ-որ մեկը կարող է կարճ խոսել լեզուներով, իսկ մեկնությունը լինի երկար: Այստեղ ևս գործում է հստակություն մտցնելու նույն սկզբունքը. գուցե մեկնության համար ավելի շատ բառեր պահանջվեն, որպեսզի հստակ փոխանցվի ուղերձի իմաստը:

Եթե լեզուները մեկնողն ունի նաև մարգարեության պարգև, ապա մեկնությունը կարող է ավարտել և անցնել մարգարեության (ես սա բավականին հաճախ եմ անում): Հոգու մեջ վարժված մարդկանց մեծ մասը հեշտությամբ կարող է տարբերակել այդ երկուսը, քանի որ այն վայրկյանից, երբ մարդն անցնում է մարգարեության, նրա խոսքերը ավելի մեծ իշխանությամբ են արտաբերվում և ավելի օծված են. մարգարեության դեպքում ավելի մեծ են ներշնչումը և օրհնությունը:

Մեկնությունը անձնական աղոթքի կյանքում

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 14.13-15, 27, 28, 40

13 Դրա համար լեզվով խոսողը թող աղոթք անի, որ թարգմանի էլ:

14 Որովհետև եթե ես աղոթք անեմ *օրար* լեզվով, իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է:

15 Ուրեմն ի՞նչ է, աղոթք անեմ հոգով, աղոթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ:

27 Եթե մեկը լեզվով խոսի, թող երկու, և եթե էլ ավելի շատ՝ երեք լինեն. մեկը մյուսից հետո: Եվ մեկը թող թարգմանի:

28 Բայց եթե թարգմանող չկա, թող լռի եկեղեցում: Թող իր համար և Աստծո հետ խոսի:

40 Ամեն բան թող պարկեշտությամբ և կարգով լինի:

Ըստ 13-րդ խոսքի՝ նրանց, ովքեր խոսում են լեզուներով, ցուցում է տրված աղոթելու, որպեսզի մեկնության պարգևն ունենան: Պատճառը նրա, որ Պողոսը ցուցում է տալիս մեզ խնդրելու այդ պարգևը, այն չէ, որ պարտադիր պետք է հրապարակային մեկնություններ անենք, այլ որ մեկնենք մեր անձնական աղոթքները, եթե Աստված կամենա: Եթե իմանանք, թե ինչ ենք աղոթում, ապա դա մեծ հոգևոր շինություն կլինի մեզ համար, իսկ եթե Աստված ցանկանա օգտագործել մեզ՝ հրապարակայնորեն մեկնելու լեզուներով ուղերձները, ապա դա կլինի լրացուցիչ օրհնություն:

Ես առաջին անգամ սկսել եմ լեզուները մեկնել իմ անձնական աղոթքի կյանքում: Մեկ օր աղոթում էի, երբ հանկարծ նկատեցի, որ անգլերեն եմ խոսում և իմացա, թե լեզուներով ինչ էի աղոթում. դրա մեկնությունն էի տալիս (իհարկե, Աստված գիտի, թե մենք ինչ ենք աղոթում լեզուներով, քանի որ մենք Իր հետ ենք խոսում, սա-

կայն երբեմն Նա ցանկանում է, որ *մենք* ևս իմանանք, թե ինչի մասին ենք աղոթում):

Այդուհանդերձ, պարտադիր չէ, որ *ամեն բան*, ինչ այլ լեզուներով աղոթում ենք, հասկանալի լինի մեզ համար, քանի որ Պողոսն ասում է. «*Որովհետև եթե ես աղոթք անեմ օտար լեզվով, իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է*» (Ա Կորնթ. 14.14): Ավելին՝ մենք չենք խոսում ինքներս մեզ հետ, այլ խոսում ենք Աստծո հետ. այն, ինչ մենք աղոթում ենք, Նրա համար պարզ է, և դա բավարար է: «*Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ Աստծո հետ: Որովհետև ոչ ոք չի լսում, բայց հոգով խորհուրդներ է խոսում*» (Ա Կորնթ. 14.2):

Ուստի տեսնում ենք, որ լեզուների մեկնության պարգևն ունի անձական կողմ, որը մեզ համար անձամբ կարող է շատ կարևոր լինել: Նշված պարգևն ունի նաև հրապարակային կողմ, սակայն բոլորս չէ, որ կօգտագործվենք հրապարակավ, այլ միայն այն դեպքում, եթե Տերը կամենա:

Մեկնությունը հրապարակային ծառայության մեջ

Նույն գլխի 27-րդ խոսքում Պողոսն ասում է. «*Եթե մեկը լեզվով խոսի, թող ԵՐԿՈՒ, և եթե էլ ավելի շատ՝ ԵՐԵՔ լինեն...*»: Մեկ ծառայության ընթացքում առավելագույնը երեք մարդ կարող է հրապարակայնորեն ծառայել լեզուներով (տեքստում օգտագործված «երկու» կամ «երեք» բառերը հունարենում անձնական դերանուններ են):

Ոմանք հարցնում են, թե արդյոք այս խոսքը վերաբերում է երեք ուղերձներին: Իրականում Աստվածաշնչում

որևէ տեղ օգտագործված չէ «լեզուներով *ուղերձներ*» արտահայտությունը: Սա մի արտահայտություն է, որն օգտագործվում է բացատրական նպատակով: Ավելի ճիշտ կլիներ օգտագործել «լեզուներով ասված *խոսք*» արտահայտությունը: Այնուամենայնիվ, այս խոսքում նկատի են առնված մարդիկ, ոչ թե ուղերձները կամ խոսքերը:

Իրականում Պողոսը չի ասել, թե մարդիկ որքան պետք է խոսեն կամ չխոսեն լեզուներով: Նա միայն ասել է, որ երկու կամ երեք մարդու թույլ տրվի խոսել, այն էլ հերթականությամբ: Սա նշանակում է, որ բոլորը միաժամանակ չպետք է խոսեն (կարծում եմ՝ նշանակում է նաև, որ միևնույն անձնավորությունը կարող է խոսել մեկից ավելի անգամներ):

Իմ խորհուրդն է ցանկացած հարանվանությանը, որ եթե երեք մարդ արդեն իսկ հրապարակայնորեն խոսել է լեզուներով, չորրորդը չպետք է միանա նրանց, որքան էլ Հոգու ուժեղ մղում զգա խոսելու: Եթե ինչ-որ բան պետք է հաղորդվի, ապա թող դա ասի նա, ով արդեն խոսել է: Սա պահպանում է ճիշտ կարգը:

Նկատի առեք, որ Պողոսն ասել է. «…մեկը թող թարգմանի…»: Չկա մի այնպիսի խոսք Սուրբ գրքում, որը կչեղարկի այն միտքը, որ միևնույն անձնավորությունը կարող է խոսել լեզուներով *և* մեկնել ինքն իրեն: Իրականում նա, ով լեզուներով հրապարակայնորեն խոսում է, կարող է մեկնել իր խոսքը, չնայած որ կան նաև ուրիշները, որոնք կարող են մեկնել: Պողոսը մեզ զգուշացնում է, որ *մրցակցային* մեկնություններ չպետք է անենք: Ուստի Սուրբ գրքին հակասող ոչինչ չկա այն բանի մեջ, որ լեզուներով խոսողը ինքն իրեն մեկնի, միայն թե մեկնողը մեկը լինի:

«Պարկեշտությամբ և կարգով»

Պողոսը Ա Կորնթացիների ամբողջ 14-րդ գլուխը նվիրել է մարգարեության, լեզուների և լեզուների մեկնության պարգևներին: Շարունակելով նա փաստում է. *«Աստված խռովության* (անգլերենում՝ շփոթության) *Աստված չէ...»* (խ. 33): Պողոսը նկատի ունի, որ մարգարեության, լեզուների և մեկնության պարգևների գործածությունը կամ սխալ գործածությունը երբեմն կարող է շփոթություն առաջացնել:

Ես ներկա եմ եղել ծառայությունների, որոնց ժամանակ ականատես եմ եղել այս պարգևների սխալ գործածությանը և շփոթված տուն եմ վերադարձել (խոսքը իմ ծառայությունների մասին չէ, քանի որ իմ ծառայությունների ժամանակ սովորաբար փորձում եմ մատնանշել բոլոր սխալները և բացատրություն տալ մարդկանց, որպեսզի վերջիններս շփոթված չգնան տուն):

Սա չի նշանակում, որ այդ ծառայությունների ժամանակ սատանան էր գործում: Պարզապես նշանակում է, որ մարդիկ կարող են շփոթել երևույթները: Եթե սովորենք մնալ Հոգու մեջ, վարվել Նրա Խոսքի համեմատ և հետևենք Պողոսի խրատին՝ *«Ամեն բան թո՛ղ պարկեշտությամբ և կարգով լինի»* (խ. 40), ապա մեր ծառայություններում շփոթմունք չի լինի:

Երբեմն մեզ պարզապես այդ դրսևորումների վերաբերյալ գործնական խորհուրդներ են անհրաժեշտ, որոնք կօգնեն ճիշտ կարգ պահպանելու մեր ծառայությունների ժամանակ: Եվ որ ավելի կարևոր է, չենք տրտմեցնի Աստծո Հոգուն: Աստվածաշունչն ասում է. *«Եվ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...»* (Եփես. 4.30): Նրան

որոշ եկեղեցիներում տրտմեցրել են. տրտմեցրել են, քանի որ Նա ցանկացել է դրսևորել Իրեն, սակայն թույլ չեն տվել, տրտմեցրել է նաև այն, որ որոշ մարդիկ անկարգ ձևով են վարվել:

Երբ ինչ-որ մեկը լեզուներով ուղերձ է տալիս, այն անձնավորությունը, որն ունի մեկնության պարգև, պետք է անմիջապես մտնի Հոգու հետ ներդաշնակության մեջ (եթե արդեն իսկ այդ վիճակում չէ), քանի որ գուցե Տերը ցանկանա նրա միջոցով գործածել այդ պարգևը:

Եղել են դեպքեր, երբ ես սպասել եմ, որ մեկ ուրիշը մեկնի, իսկ նա սպասել է, որ ես մեկնեմ: Ուրիշներն էլ ուրիշներին են սպասել: Մեզնից յուրաքանչյուրը կարող էր մեկնել լեզուներով ուղերձը, սակայն մենք պահը կորցրել ենք, քանի որ Սուրբ Հոգու հետ ներդաշնակության մեջ չենք եղել (մենք Աստծուց չենք կարող ոչինչ ստանալ, եթե Նրա հետ ներդաշնակության մեջ չենք):

Սա է պատճառը, թե ինչու երբեմն ասվածի մեկնությունը չենք ունենում: Երբ պահը բաց եմ թողել, խնդրել եմ, որ լեզուներով ուղերձ տվողը կրկնի ուղերձը, որպեսզի մեկնեմ: Այնուհետև, երբ սկսել եմ խոսել, միացել եմ Հոգուն, և Աստված տվել է ինձ մեկնությունը:

Լեզուների և մեկնության վերաբերյալ վերջին կետը, որն ուզում եմ շեշտադրել, Ա Կորնթացիս 14.26-ում է. *«...ամենը ՇԻՆՈՒԹՅԱՆ համար լինի»:* Երբ Հոգում ինչ-որ բան է արվում, այն բերում է շինություն, ներշնչում և օրհնություն. սա միջոցներից մեկն է, որով կարելի է ստուգել, թե արդյոք արվածը Հոգով է արվել (իհարկե, եթե Հոգու հետ ներդաշնակ չենք, ապա այնպիսի դիրքում չենք, որ կարողանանք դատել):

Այդուհանդերձ, հոգևոր պարգևների դրսևորումները

պետք է դատել (այսպես թե այնպես՝ հրապարակայնորեն լինի թե ոչ, մենք դատում ենք դրանք՝ ընդունում ենք կամ մերժում): Չենք կարող միշտ ընդունել բոլոր մարդկանց դատողությունները, այլ միայն նրանցը, որոնք զգայուն են Սուրբ Հոգու շարժին:

Որպես եզրափակում՝ թույլ տվեք նշել, որ բոլոր ինը հոգևոր պարգևները գործում են հավատքի միջոցով: Դրանք չեն գործում հավատքի պարգևի միջոցով, այլ ընդհանուր կամ ընդհանրական հավատքի միջոցով: Նաև մի՛ մոռացեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը՝ *«...ամեն բան հնարավոր է հավատացողին»* (Մարկ. 9.22): Եթե դուք հավատում եք, ապա ամեն բան հնարավոր է *ձեզ* համար:

Անգիր.

«...լեզվով խոսողը թող աղոթք անի, որ թարգմանի էլ»:
– Ա Կորնթ. 14.13

Հեղինակի մասին

Քենեթ Է. Հեգինի ծառայությունը սկսվել է ավելի քան վաթսուն տարի առաջ ՝ այն բանից հետո, երբ տասնյոթ տարեկանում Աստված հրաշքով բժշկել է նրան սրտի արատից և արյան անբուժելի հիվանդությունից: Այսօր Քենեթ Հեգինի ծառայությունը տարածվել է ամբողջ աշխարհով: Ծառայության ռադիո հաղորդաշարը՝ «Հավատքի օդային սեմինարը», լսում են ամբողջ Միացյալ Նահանգներում. այն հասանելի է ավելի քան հարյուր ազգության համար: Այլ ծառայությունների թվում են *«Հավատքի խոսքը»,* որն անվճար ամսագիր է, ամբողջ երկրով անցկացվող արշավները, «ՌԵՄԱ» առցանց աստվածաշնչյան դպրոցը, «ՌԵՄԱ» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը, «ՌԵՄԱ» շրջանավարտների ընկերակցությունը, «ՌԵՄԱ» միջազգային ծառայողական ընկերակցությունը և բանտերի ծառայությունը:

Հոգևոր պարգևների ուսումնասիրության ձեռնարկ

Մինչ Քրիստոսի Մարմինը պատրաստվում է վերջին ժամանակներին, գնալով ավելի կարևոր է դառնում հոգևոր պարգևների ուսումնասիրությունը:
Սուրբ Հոգու պարգևները գիրքը հանգամանորեն ուսումնասիրում է *գիտության խոսքը, իմաստության խոսքը, հոգիների զանազանությունը, հավատքը, հրաշագործությունները, բժշկությունների պարգևները, այլևայլ լեզուները, լեզուների մեկնությունը և մարգարեությունը*:

Այս տեղեկատվական ուսումնական ձեռնարկը պատասխանում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են.

- Արդյո՞ք *բոլորը* կարող են մարգարեանալ:
- Արդյո՞ք Հոգու պարգևներն ունեն գործնական կիրառություններ:
- Կա՞ տարբերություն բնական և գերբնական բժշկության միջև:
- Արդյո՞ք բոլորն ունեն հավատքի պարգևը:

Տասներեք դասից բաղկացած, դինամիկ զարգացող այս ուսումնական ձեռնարկը անձնական կամ խմբային ուսումնասիրության համար է:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ
ՊԱՐԳԵՎՆԵՐԸ